Լուսինը նախ պտտւում իր առանցքի վրայ, երկրորդ՝ երկրի չորս կողմը (28 օր. 19 ժ. և 45 վայրկեան) ուրեմն և երկրի հետ էլ արեւի շուրջը. այդ պատճառով էլ մենք միշտ լուսնի մի երեսն ենք տեսնում և երբէք միւս երեսը չենք տեսնի։ Լուսնի վրայ էլ լինում է գիշեր ինչպէս և ցերեկ, բայց այնտեղ գիշերը ինչպէս և ցերեկը 14 օր 18 ժամ է տեւում։ Ցերեկները այնքան տաքութիւն է հաւաքւում լուսնի վերայ, որ եթէ ջուր լինէր՝ կ'եռար. իսկ գիշերները էլ այնքան ցուրտ է. որ մարդ կ'սառչի։ Վերջերքս նկատել են, բացի ձիւնի կոյտերից և մի շարք ալիքանման և ճիւղագծեր, որոնք զարմանալի նմանութիւն ունեն գետերի։ Լուսնի մասին միշտ եղել են զանազան կարծիքներ յայտնողներ, թէ այդ երկնային մարմինը բոլորովին չէ մեռել, այնտեղ դեռ կենդանութիւն կայ, մինչև իսկ բնակիչներ կան, որոնց հետ առաջարկում էին հաղորդակցութիւն սկսել։

### V.

### ԵՐԿՐԱԳՈՒՆԴԸ

Երկրագնդի միջին հեռաւորութիւնը (ըստ Սորուվէի) արեւից 19,825,000 աշխ. մղ է։ (Թնդանոթի գնդակը անդադար եթէ թռչի մի վայրկ. 1,000 ֆուտ՝ նա էլ հազիւ կարող է 12 տարում տեղ հասնել), բայց այս հեռաւորութիւնը ոչինչ է անշարժ աստղերի հեռաւորութիւնից, որոնցից ամենամօտին թնդանօթի գնդակը հազիւ 250,000 տարում հասնի։ Երկրագնդիս տեսքը—ձւաձև կլոր է. մի փոքր կողքերից ճնշուած։ Երկրագնդի մեծութիւնը 1,713,127 մղ է։ Տրամագիծը 5,391 -5,400 մղ է։ Մակերևոյթը 9,261,938 քառակ. մղ է։ Երկրիս զանգուածը (միասին վերցրած) 2,650,184,445 խորանարդ մղ է։ Երկրիս քաշը մօտ 9,000 տրիլիօն է։

# III. ՕԴԵՐԵՒՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ

Օդերեւոյթաբանական երեւոյթները թէեւ «Էփիմերդէն» մշտնջենաւորապէս գուշակում է, բայց այդպիսի երեւոյթներն, ինչպէս եւ եղանակի փոփոխութիւններն ամէն մի 28 տարին բոլորովին միատեսակ է նախագուշակում. յայտնի Բրիւսէլի Օրացոյցն էլ 200 տարի ժամանակով մի ինչ-որ իւր տեսակ է գուշակութիւններ անում, բայց այդպիսի գուշակութիւններին չի կարելի հաւատ ընծայել, որովհետեւ ներկայումս դեռ եւս գիտութեան շնորհիւ հազիւ կարողանում են երեք օրից առաջ գուշակութիւններ անել, այն էլ ոչ հաստատապէս։ Սակայն ժողովրդի մէջ տարածուած այդպիսի գուշակութիւններին աւելի նշանակութիւն տալով եւ ինչպէս հազարաւոր տարիների ընթացքում, օդի փոփոխութեանց երեւոյթներին ենթարկուելով՝ եղանակների բոյսերի վրայ ունեցած ազդեցութիւնը, եւ շատ կենդանիների զգացողութեան շնորհիւ պատահելիք դեպքերը նախօրօք նկատելով, ժողովուրդը փորձով իսկ ընտելացել է աւանդութեամբ իրան հասած խիկական նախազգուշութեանց կանոններին, որոնք մեծ մասամբ ճշմարտում են ինչպէս մենք շատ անգամ փորձով տեսել եւ հաստատեցել ենք՝ հետեւելով այդ կանոններին, որով եւ մի քանի կանոններ զետեղելով այստեղ, մեր օրացոյցի ընթերցողների հետաքրքրութեան համար առաջարկում ենք փորձել եւ ուսումնասիրել։

Լուսնի մեծ եւ լայն բակը նշան է եղանակի փոփոխութեան։

Եթէ լուսնի եղջիւրը սրածայր երեւայ, պարզ եղանակի նշան է։

Եթէ արեւը սայր մտնելուց երեք-չորս ժամ առաջ անձրեւ տեղայ, նշան է, որ վերջը կը պարզուի։

Եթէ ձմեռը կամ աշնանը մութը կոխելուն պէս սկսի բարակ անձրեւ, այդ նշան է, որ ամբողջ գիշերը պիտի շարունակուի։

Եթէ լուսնի բոլորքը շատ բակեր են երեւում, դա նշան է, որ շարունակ հողմով կ'անձրեւէ։

Սպիտակ եւ պարզ լուսինը, խոստանում է լաւ եղանակ։

Արեւի ծագման հետ սկսուած փոթորիկը, հէնց առաջին գիշերն էլ դադարում է։

Եթէ ամառը կամ աշնանը առաւօտեան շատ կանուխ սաստիկ մառախուղ լինի իջած ամէն կողմը, դա նշան է, որ ճաշի ժամանակ օրը կ'բացուի։

Պարզ լուսինը լրման ժամանակ ցոյց է տալիս պարզութիւն, իսկ մթին խաւար լուսինն, անձրեւ է գուշակում։

Ասում, են նոր լուսնի երրորդ եւ չորրորդ օրն ինչպէս որ լինի եղանակը, այնպէս էլ ամբողջ լուսնական ամիսը կ'անցնի։

Եթէ հանդարտ եւ պարզ եղանակին արեւը մայր մտա‌ւ պայծառ եւ իւր մօտ հորիզոնի վերայ առանց ամպի՝ նա նշան է, որ հետեւեալ օրը պարզ կը լինի։

Եթէ խառնակ օրերից յետոյ լեռներ գլխին մանր-մանր ամպեր լինեն ցրուած՝ դա նշան է, որ մի քանի օր գոնէ լաւ եղանակ կլինի։

Եթէ արեւը մայր մտնելուն պէս արեւմտեան կողմը ամպերը քշելիս լինի դէպի արեւելք՝ հետեւեալ օրը պարզ եղանակ է խոստանում։

Եթէ ամառուայ գիշերներին պարզ երկնակամարի մի որեւիցէ կողմը փայլատակէ. դա նշան է, որ հետեւեալ օրը այն կողմը կ'անձրեւէ։

Կովկասում աշնանը եւ ձմեռը հարաւային եւ արեւելեան հողմերը համարեա թէ միշտ անձրեւաբեր են լինում կամ շարունակ թխպոտ օրեր են բերում։

Երբ արեւի մտնելու հետ կարմիր ամպերն անհետանում են, հետեւեալ օրը վճիտ եղանակ է լինելու։ Կարմիր գոյնով լուսինը՝ հողմ եւ վատ եղանակ է գուշակում։

Մանր եւ բարակ ձիւնը՝ շարունակուող սառնամանիք։

Հանդարտ եւ պարզ եղանակը՝ ձմեռը—սառնամանիք։

Կատուն եթէ պատը չանգռտում է—առհասարակ անկանոն եղանակ։

Կատուն, եթէ գլուխը ծածկում է եւ պառկում—սառնամանիքի նշան է։

Կատուն, եթէ յատակը (գետինը) չանգռտում է—վատ եղանակ։

—Արեւելեան չոր քամին լաւ եղանակ, իսկ հիւսիսային քամին ցուրտ, Արեւմտեանը անձրեւ է բերում։ Հարաւինը ամառը լաւ եղանակ, ձմեռը տաք եւ խոնաւ։

—Եթէ աստղերը ձմեռը սաստիկ փայլում են—սառնամանիք է։

—Արեւի շուրջը բակ—վատ եղանակ։

—Սիւներ արեւի մօտերքը—սառնամանիք։

— Ամբողջ երկնակամարը ամպած պարզուող արեւմտքում՝ մի քանի օր լաւ եղանակ է գուշակում։

—

## ԷՖԻՄԵՐՏԷԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

1895 Թ. Աչիռը լինելով տանուտէր՝ ամբողջ տարին, բացի աշունքից, առողջարար կ'լինի. գարնանը անձրեներ սակաւ, ամառն եւ աշնանը շատ, վերջը երաշտ, տեղ-տեղ կարկուտ։ Ձմեռը շատ ձիւն, սաստիկ քամիներ եւ ալեկոծութիւն, պտուղներն առատ եւ քաղցրահամ կ'լինին, բայց պիտի շտապել շուտ քաղել, որ անձրեները չփչացնեն. պտղատու ծառերի տնկելը լաւ է։ Ցորենը առատ կ'լինի, իսկ գինիները կ'փըչանան։ Երկրին պիծակ կ'դիպչի։ Անասունների, նամանաւանդ եզների մէջ, ցաւ կ'ընկնի. մեծ կենդանիներ եւ գազաններ շատ կ'սատակեն։ Արիստախան փորահարութիւն եւ առատ ուրիք քեստութիւն կը լինի։ Աւազակներ շատ կ'երեան եւ մարդկանցից բարեպաշտութիւնը կ'վերանայ։ Իսկ Երեւակը գտնուելով երկնքի իններորդ աստիճանում, քառանկիւնաձեւ գիրքով, դէմ յանդիման հրատին եւ արեգակի վիշապի (համաստեղութեան) հետ կցուելը, ցոյց է տալիս իշխանի մահ եւ մի թագաւորի մի նշանաւոր ճանապարհի գրաւումն եւ այն թագաւորների ոչնչանալը, որոնք բռնութեամբ կ'թագաւորեն եւ այլ իշխանութիւններին իրանց իշխանութեան տակ կ'դնեն։ Զինուորները իրար հետ կ'վիճեն եւ տեղերը կ'փոխեն։ Ռամիկներին թագաւորից վնաս կ'հասնի։ Հռոմայեցւոց կողմը տրտմութիւն եւ սաստիկ խառնակութիւն կ'ընկնի։ Հայաստանում աւերածութիւն, մեծամեծների տների քանդուիլ եւ միմեանց մէջ երկբաժանում կ'լինի։

# IV. ԻՄԱՍՏՆԵՐ

Ծողովուրդը միշտ բարի է ցանկանում, սակայն միշտ չէ ճանաչում թէ ծրն է բարին։

—

Շռայլութեան վատը նա է՝ որ ժամանակի յարգը չ'գիտէ։

—

Ծոյլը ամեն բանի դժուար է հասնում. ժիրն է, որ ամեն արգելքի յաղթում։

—

Մարդ ճանաչելու միակ միջոցը նա է, թէ նա պարտքը հատուցանել սիրում է։

—

Զուարճութիւնը իրանից փախչողների ետեւից է վազում։

Թագնուած կայծից աւելի վախեցիր՝ քան թէ յայտնի սրից։

—

Փողի յարգը ճանաչելու համար փոխառութիւն պէտի անես, որ տեսնես թէ որքան դժուար է։

—

Ճշմարիտ պարտատէրը մինչև պարտքի հատուցումն՝ ազատութիւնից զըրկուած է լինում։

—

Աւելի պատուաբեր է ներել՝ քան վրէժ առնել, թէև շատ անգամ ներելը վնաս էլ է հասցնում։

—

Այն մարդը որ ուրիշների սխալներովն է զբաղուած, իր ժամանակը վատնում է։

—

Որկորը աւելի մարդ է սպանել և կ'սպանի՝ քան թէ սուրը, հրացանն ու թնդանօթը.

—

Փոքրիկ առողերը միշտ փայլուն են մնում, իսկ լուսաւոր անհեղ արեգակը շատ անգամ է խաւարում։

—

Եթէ ընկոյզ ես, իմացիր որ երկու քարի մէջ տեղ մի օր կոտրուելու ես։

—

Ով շատ մեծ ընտանիքից է կին առնում, նա աւելի տէրերի է հանդիպում քան խնամիների։

—

Երեք բան անտանելի է.—որդն ականջում, ծուխն աչքերում և կռուան կինը տան մէջ։

—

Այն տունը ուր երկու կանայք կան, երբէք մաքուր չի աւելուի։

—

Շատ բարեկամներ ունենալ և քչերին հաւատալը իմաստութեան նշան է։

—

Մարդկանց վրայ յոյս դնելով ես երբէք երջանիկ չեղայ։

—

Փաստաբանները, բժիշկներն ու տէրտէրները, երեքն էլ ճգնում են մաքրել մարդկանց քսակը, ստամոքսն ու խիղճը։

—

Ազահութիւնն ու ոգխութիւնն են այն չար ոգիքը, որ երկիրս կործանեցին։

—

Երեք տեսակ մարդկանց կեանքը կեանք չէ, ով իր մերձաւորի ողորմութիւնով է ապրում, ով մարմնով ծանր հիւանդ է և ով հողաթափի իշխանութեան (կնոջ) տակն է։

—

Իմաստուն և արդար տնտես է այն մարդը, ՚եթէ ցանկայ իր մահուանէն գերեզմանին մէջ ևս ապրել։

—

Աշխարհ ստեղծել և վերաշինել մայրերի հանճարի գործ է։ Սրտի պատրաստողներ, յոռի ուղղութիւններ արմատախիլ անողներ մայրերն են։

—

Ամեն մարդ եթէ իր վարձատրութեան քառորդը խնայէ, ծերութեան ժամանակ ոչ ազգին և ոչ բարեկամին ծանրութիւն լինի։

—

Կեանքը մեզ մեռնելու պայմանով է տուած, սա մի լոկ գնացք է դէպի մահը։

—

Ազգը պէտք է իր պատմութիւնը յարգէ, որովհետև հայրենասիրութիւնը նախնիքների կեանքի բոլոր դժբաղդ և փառաւոր էջերից է գոյանում։

—

Կատարեալ և օրինաւոր մարդը ինքն է իր դատաւորը և ինքն է իր տէրը։

—

Մանր մարդիկ ուրիշների արածի վրայ են ուշադրութիւն դարձնում և իրանց անելիքի մասին ուրիշներից են խորհուրդ հարցնում։

—

Խելքը ուրիշ ոչինչ է, եթէ ոչ մարդու դատելու և խորհելու ձևը. գիտնականները այդ ձևը համարում են մեթոդ. գեղարուեստին ծառայողները տաղանդ.



† (1789) ԲԵՆ. ՖՐԱՆԿԼԻՆ

# V. ԲԺՇԿԱԿԱՆ

## I. ՄԻ ՔԱՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՇԱՆՆԵՐԸ։

Այստեղ առաջ ենք բերում մի քանի հիւանդութիւնների նշանները, որոնցով հիւանդացողները մինչև բժշկի հասնելը, կարող են օգուտ քաղել։ Բայց և այնպէս բժիշկի գալը պէտք է շտապեցնել։ Այս էլ լաւ պէտք է իմանալ, որ այն հիւանդութիւններն են շուտով անցնում, կամ առողջանում են նրանք, որոնց ժամանակ բժիշկը իւր ժամանակին է վրայ հասնում։ Աշխատեցէք նոյնպէս որ բժիշկը շուտ-շուտ չ'փոխէք որ հիւանդին վնաս է։

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ—առհասարակ հետևեալներն են լինում, տաքութիւն, կարմրութիւն, ցաւ, ուռուցք, (կարմրութիւնը զանազան է լինում) ցաւը կտրատող, ծակող, կսկծալի, խթող, տաքութիւնն էլ այնքան սաստիկ չէ լինում։

Հոնքերի (вѣкъ) բորբոքման նշանները, կարմրութիւն, տաքութիւն, չորութիւն, ցաւ, արտասուաց թորումն, աչքի բորբոքում, որի ժամանակ աչքերից ժահր է հոսում։

Ստամոքսի բորբոքումն.—Եթէ գէր է հիւանդը, փրղցում է. նշանները—սիրտը խառնում է, բորբոքման նշաններ, թթու համ, այրումն, փսխումն, ստամոքսի ցաւ և ցնցումն (судороги) գգուած դրութիւն, երբեմն էլ պորտի մօտերքում և մրսաթորելուց առաջ ցաւ է զգում։



ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ.—Շարունակ անընդհատ ցաւ. գործարանների գործողութիւնների խանգարուել, սաստիկ տենդ (ներքին բորբոքման ժամանակ ցաւը աւելի սաստիկ է լինում)։ Լեարդի, սրտի թաղանթի մօտ երիկամունքների գլխի և մէջքի ողնաշարի ցաւը շատ մեղմ է լինում։ Սրա համար բորբոքման նշանը միայն ճնշելու ուժից անընդհատութիւնն է։ Ուղեղի բորբոքման ժամանակ զառանցում է (դեղն է տալիս)։ Կոկորդի բորբոքման նշանը—խեղխզոց, խրխռոց։ Թոքերի բորբոքման—հեռոցը։ Տենդը ջղային, բորբոքիչ և փթեցնող է լինում։ Փորի և աղիքների բորբոքումն է՝ եթէ բացի այս նշաններից և զկռտում է։ Ուղեղի բորբոքման ժամանակ, սիրտը խառնում է, բերանից գցում, դեղն է տալիս և քնարբութեան մէջ է մնում։ Երիկամունքների և աղիքների բորբոքման ժամանակ նոյնպէս սիրտը խառնում է փսխում է բերանից։

ՏԵՆԴ.—Մարդու գործարանների ընդհանուր թուլութիւն, քնի անհանգստութիւն, ախորժակի պակասութիւն, բերանում դառնութիւն, դողացնում է և յետոյ տաքութիւն է տալիս. լեզուն տարթ-կեղտ է բռնում։ Այս հիւանդութիւնը կրկնում է օրու-մէջ կամ 1—2—3 օրը մի անգամ (շատ անգամ ամեն քառուեկ օրը մի անգամ։) Ամեն օր էլ պատահում է, որի ժամանակամիջոցում ոյժից ընկնում է, մարմինը կոտրատւում է, սաստիկ տաքութիւն ունեցած ժամանակն էլ պատահում է որ դեղն է տալիս։

ՍՈՍՈՐԴԻ (зѣва).—Հազ, խզխզոց, խրխռոց, երբեմն այրող և հեռող ցաւ, կոկորդում չորութիւն, կարմրում է և կուլ տալը դժուարանում, հիւանդը անհանգիստ դրութեան մէջ է լինում, կուլ տալիս սաստիկ ցաւ է զգում, (երբ որ բզում գեղձնիկներ—խլեր են յայտնւում։

ԴԻՖՏԵՐԻՏ.—Սրա նշանները միևնոյն են ինչոր սոսորդինը, միայն բացի նրա նշաններից ամբողջ կոկորդում և կատիկում,

*ևս առաւել նշաձև դեղձիկների վրայ յայտնւում են գորշագոյն փառ, երբեմն էլ հիւանդը ընկնում է սաստիկ ջղային դրութեան մէջ և բերանից վատ հոտ է գալի: Այս հիւանդութիւնը վարակիչ է և սաստիկ վտանգաւոր, պէտք է զգուշանալ (մեռնում են 4-6 օրից):*

ԴԵՂՆՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԴԵՂՆԱՑԱՒ.—*Մարմնի կաշին ստանում է դեղին կանաչ կամ գորշ գոյն, ջղային դրութիւն, աջու կողին ցաւ ու ծակոցներ:*

ԹՈՔԵՐԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ.—*Այս հիւանդութիւնը ցրտից է առաջանում, և ամբողջ մարմնի ցնցուելով-դողով է սկսւում, որից յետոյ սկսւում է սաստիկ տաքութիւն, հիւանդը դժուար է շնչում, յաճախ կողերում ծակոց է զգում, հազում է, սաստիկ ծարաւ է զ'գում, կաշուի չորութիւն է ունենում: Ճգնաժամը մեծ մասամբ լինում է 7-9 օրը. բայց պատահում է հիւանդը 3-7-9-11-13 և այլ օրերումն էլ առողջանում է:*

ՈՐՈՎԱՅՆԱՈՐԴԵՐԻ (глисты).—*Գլխի պտոյտ, որձկալ, փսխում է, սրտի գդալի տակը ցաւ է զգում, ախորժակը պակաս է լինում, աչքի բիբերը լայնանում են. արտաթորման ժամանակ մէկ, մէկ, որդերի նշաններ են երևում, երբեմն պորտի մօտերքում ցաւ, արիւնը դէպի գլուխը տալու նշաններ և գլխի ցաւ:*

ՔՈՍ (чесотка).—*Վարակիչ է, առաջանում է կաշուի մէջ մտած մանր կենդանիներից-պարազիտներից* (клещей) *նշաններ են՝ սաստիկ քոր, մատներում բշտիկներ՝ որոնք տարածւում են մարմնի այլ մասերում և քորելուց պատռուելով ժահրոտում և կեղկեղքւում:*

ՍՏԱՄՈՔՍԻ ՍՈՒՐ ԲՈՐԲՈՔՈՒՄ.—*Ջղային դրութիւն, ստամոքսում սաստիկ ցաւ, փսխում, սաստիկ այրում սրտագդալի տակ, ծարաւ, սառը քրտինք. ցաւի կսկծից ուշագնացութիւն, ույժից ընկնել և արիւնը գլուխը տալու նշաններ:*

ՄԻԶԱՆՑՔԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ.—*(պատճառը միզարանում քարերի գտնուելն է կամ փորի ներքի մասերի մրսելը): Միզարանում սաստիկ ցաւ է զգում, երբ փորի ներքի մասերին ձեռքով թեթև սեղմում ես. շուտ շուտ միզելու հարկաւորութիւն, մէզը հոսում է կաթիլ-կաթիլ և կարմրագոյն է լինում, ջղային դրութիւն. երբեմն ձգձգում մեզարանում, այրւող և կսկծալի ցաւ՝ որը մինչև գօտկատեղն է հասնում:*



ԹՈՒԹՔ ԿԱՄ ԹԹԱԽՏ (гиморрой).—*առաջանում է, հաստ աղիքի միջի երակի լայնանալուց: Այդ երակը պարբերաբար արիւնով լցւում է և ուռչում, հիւանդն ունենում է գլխացաւ, փորը կապ է լինում, ծոծրակում և գօտկատեղում տաքութիւն. ույժից ընկնում է, երբեմն էլ սաստիկ արիւնահոսութիւն է լինում, տաքութիւն և ծակոց (արիւնատար երակների բորբոքման միջոցին):*

ԿԱՐՄԻՐ ՔԱՄԻ (Рожа)—*Նշանները, պսպղուն կարմրութիւն, ուռուցք, կաշուի այրել և մրթու քոր, դող, երբեմն բորբոքումն տեղը փոխում է և բշտիկներով ծածկւում և եթէ հիւանդութիւնը գլխի վրայ է, գլուխը ցաւում է, հիւանդը չի քնում և զառանցում է, (դէլն է տալիս) և երեսը ծռմռում է:*

ՄԼՈՔՈՐ ԿԱՄ ԵՂՋԱՏԵՆԴ (крапивная лихорадка).—*Թեթև դողացնում է, տաքութիւն է տալի. մարմնի վրայ էլ քոր եկող բշտիկներ են յայտնւում օղակների նման:*

ԽՌՈՒԿ ԿԱՄ ԻՆԱՂ (крупъ).—*Թեթև հազ (ցերեկով) և տենդն էլ աննշան, երեկոները հիւանդը նեղանում է և դժուար է շնչում, կոկորդը կուչ է գալիս, ունեցած հազը խռխռոցի է փոխւում, տենդը աւելանում է, ձայնը խռպոտւում, երեսը կապտում, ձեռքերը և ոտները սառչում, իսկ կոկորդում զգում է սաստիկ ցաւ և դժուարաշնչութիւն:*

ԿԱՐՄՐՈՒԿ.—*Ջղային դրութիւն, ույժից ընկնում է, տաքութիւն, գլխի ցաւ, 2-3 օրից երեսի և մարմնի այլ տեղերում փոքր բշտիկներ են յայտնւում (մանր պզուկներ), որոնք*

քանի գնում են աւելանում են, (այս պզուկները մանր փայտօջլի կծած տեղի-բծերի նման են լինում)։ Բծերը տեղ տեղ հաւաքուած են լինում, երեք օրից յետոյ այդ պզուկները անհետանում են և կաշին սկսում է թեփոտուել, երբեմն հիւանդը սաստիկ գրգռուած դրութեան մէջ է լինում և չի քնում։

ԽՈԼԵՐԱՅԻ ՆՇԱՆՆԵՐ.—Ամենից առաջ շուտ-շուտ և առատութեամբ լուծում է մոխրագոյն, իսկ վերջը բոլորովին անգոյն բրնձի ապուրի նման հեղանիւթ (շատ անգամ մի ժամուայ մէջ 10—15 անգամ), փորի մէջ առանց ցաւի համարեայ գալարում և ղուղուց զգում։ Ջրուեթը պակասում է, ամեն 2—3 ժամը մի անգամ, իսկ 2—3 անգամ լուծելուց յետոյ էլ փսխում է կերակրի մնացորդները, յետոյ կտրած կաթի նման հեղանիւթ. այսպէս շարունակւում է ամեն 10—15 րոպէից յետոյ, սկզբումը լինում է հեշտ և գնալով աւելի դժուարութեամբ և չարչարանքով։ Վրան տխրութիւն և սրտի գդալի տակ ցաւ է գալիս։ Փորի լուծելուց և փըսխելուց յայտնւում են կծկումները, որ խոլերայի ամենավտանգաւոր նշաններիցն է, որը առաւելապէս ոտի ձկնամկներում՝ շատ անգամ էլ ձեռքերում և ոտներում։ Մարմինը սառչում և կապտում է։ Հիւանդութեան սկզբումը տաքութիւն չէ լինում, այլ ընդհակառակը այս նշաններից յետոյ էլ տաքութեան աստիճանը ցածրանում էլ է, ծարաւութիւն է զգում, զգացողութիւնն էլ մինչև մահը պահպանւում է։ Այս նշանները մինչև 8—24 ժամ տևում են. բայց պատահում է որ 2—3 օրից էլ առաջ մեռնում են, երբ զարկերակը սկսում է զօրեղանալ և գնալով արագանում է (մինչև 90—100 զարկ), արեան՝ գլուխը հոսելու նշաններ են երևում, շատ անգամ և հարինքի—տիֆի նման էլ խլութիւն։ Առողջանալը 4—10 օր է տևում։ Հաստատ դեղ սրա դէմ գտնուած չէ դեռ։ Շտապիր՛ բժիշկ հասցնել։

ԾԱՂԻԿ.—Ջղային դրութիւն, վրա չորրորդ օրը մարմնի



վրայ պալարներ են յայտնւում, երեսի, վզի, կրծքի և անդամների վրայ դուս տուած պլպլում են, իսկ յետոյ գոյնը փոխում են—որոնք 8—9 օրից յետոյ թարախ բռնում չորանում և վայր թափւում, տեղը կարմիր բիծ և փոս տեղ թողնելով։ Հիւանդի դրութիւնը 11 օրից յետոյ միայն լաւանում է։ Եթէ պալարները արիւնով են լինում լցուած, ասում են—սև ծաղիկ, որի ժամանակ և պատահում է ջղերի քայքայումն, անհանգստութիւն և զառանցում է (դելն է տալիս)։

ՔՈՒԹԵՇ.—Սաստիկ տաքութիւն, երբեմն զառանցում է, փսխում է, կուլ տալը դժուարանում է, բորբոքումն սաստկանում է, վզում դեղձնիկներ, ուռուցք և ցաւ ներսից կոկորդում, 2—3 օրից յետոյ վզի, կրծքի, երբեմն էլ երեսի և այլ մասերում յայտնւում են մանիշակագոյն կլոր բծերով պզուկներ. 6—7 օրից այս բոլոր երևոյթները սկսում են թուլանալ, և մարմնի մորթը—կաշին թեփոտւում է. երկու շաբաթ շարունակ թերթի և ալրի թոզի նման կաշին թափւում է, (այս ժամանակ մրսելուց պէտք է զգուշանալ), ունենում է կաշու տաքութիւն, ջղային դրութիւն. արիւնը գլուխը տալու նշաններ են երևում, շատ անգամ էլ դուրս տուրս տուածը անհետանում է։

ԿԱՊՈՅՏ-ՀԱԶ ԿԱՄ ԱԲԼՈՐԱՀԱԶ (коклюшъ).—Սա ցնցող և խեղդող հազ է, որը ամեն անգամ ուժով կրկնւում է։ Նշաններն են. մի քանի անգամ իրար ետևից հազեցնում է, շունչը կրկնելով. երբեմն տենդային դրութեան մէջ է լինում, հազի սկզբին փսխում է, անզգայ կերպիւ ջրուեթում և արտաթորում է, խուխն էլ առատ և կպչուն է լինում, սրտի ցնցուելով (конвульсями) խեղդուածի նման հեկեկում է, երբեմն շունչը կտրելու հետ ամբողջ մարմնին անզգայութիւն և հիւանդը գիտակցութիւնը կորցնում է։

ՕՁԻ ԿԾԱԾԸ ԻՄԱՆԱԼՈՒ ՆՇԱՆՆԵՐ, ԹՈՒՆԱՒՈՐ Է ԹԷ ՈՉ.—Թունաւոր օձի խայթուածը նրանով է զանազանւում,

'ր թօղնում է երկու ատամներից խայթուածի հետք. իսկ սաս-մնթոյն օձինը կիռումկռ ձևով վէրք: Խայթուած տեղում սաստիկ ցաւ է զգում, վէրքի շուրջը ուռուցք և ծիրանագոյն բծեր կամ բշտիկներ է յայտնւում. սառսուռ և ծարաւ է զգում, դժուարաշնչութիւն, դժուար միզում, փսխում, դողացնում է և արեան թունաւորութեան այլ և այլ նշաններ են երևում:

---

## II. ԴԵՂԵՐ, ՄԻՋՈՑՆԵՐ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ:

---

ԹՈՒՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ.—Մինչև բժշկի հասնելը նախ պիտի աշխատել թունաւորածի ստամոքսը դատարկել, փսխել տալով, որպէս զի թոյնը ստամոքսից դուրս թափուի: Եթէ փսխեցուցիչ դեղ չկայ պէտք է հաւի փետրով կոկորդը խուտուտացնել մինչև փսխի: Տանու դեղեր կարելի է պատրաստել, վեց ձուի սպիտակուցը մի շիշ ջրի մէջ խառնած հարել կամ մի դդալ օսլան (կրախմալը) մի շիշ ջրի մէջ եռացրած խմացնել մեծ քանակութեամբ թունաւորածին մինչև որ փսխի: Կաթն էլ լաւ է ներգործում. բայց եթէ թոյնը խոտեղէն է աւելի վնաս է կաթը:

Փսխելուց յետոյ պիտի լուծողական տալ: Երկու սեղանի դդալ աղը կէս շիշ ջրի մէջ հալեցրած—հեղուկը օգտակար է ընդունելու: Եթէ թունաւորուածի նշանները քչանան, կարելի է քրտնացնող (դեղեր) խմելիքներ տալ թէյ, տաք ջուր, գինի (քիչ), որովհետև քրտնելով էլ մասամբ թոյնը դուրս կ՚գայ:

ՏԱՎԱՐԻ ԺԱՆՏԱԽՏԻ (չումա) ԴԷՄ.—Ամենից առաջ պիտի լուծողական տալ, օրն էլ երկու անգամ սառը ջրի մէջ լողացնել հիւանդ տաւարին, և օրը երկու-երեք անգամ հե-



տեւալը գործ դնել: Ամանի մէջ ածած կէծ-կրակին կպրի մէ լաւ թաթխած փալաս դնել: Կենդանին—դուր գալով դրանից առաջացած ծուխը՝ իրան է քաշում:

ԽՈԼԵՐԱՅԻՑ ԱԶԱՏ ՊԱՀԵԼՈՒ ՀՆԱՐՔ.—Ահից և շուտափոյթ գաղթելուց չպիտի մարդ իր սովորական կեանքի եղանակը փոխի: Ստամոքսը չպիտի ծանրաբեռնել դժուարամարս, չաղ, հում, շատ սառը, շատ ծարաւեցնող և առաւելապէս հին, փչացած, շատ աղարած կերակուրներով: Այսպիսի կերակուրների գործածութիւնը աւելի գիշերներն է վնասակար, քան ցերեկները:

Երկար ժամանակ քաղցած մնալն ևս վնասակար է, ինչպէս և տնից առաւօտները դուրս գալը, այլ պիտի խմել տաք թէյ, սուրճ, թերխաշ ձու, եփած կամ խորոված մի կտոր միս, պիտի որոշեալ ժամերին ճաշել և ճաշը բաղկացած պիտի լինի, ինչպէս ասացինք վերը, հեշտ մարսելու կերակուրներից: Նրանք, որոնք բանջարեղէնի-կանաչեղէնի և պտուղների սովոր են և առողջ ստամոքս ունին, կարող են գործածել, բայց պիտի լաւ մաքրած եփած, եռացրած ջրի մէջ անցկացրած, և շատ հասած, վնասած և փթած չ'պիտի լինի:

Այն ամեն բաները, որոնք փորի լուծումն կարող են առաջացնել անպայման պիտի խոյս տալ և պատահած ժամանակ ան միջապէս բժշկի պիտի դիմել: Հում և անեփ կաթն ևս վնաս է: Ամեն կերակուրներ պիտի ճանճերից թագցնել: Ամաններ ևս միշտ եռացրած ջրով լուանալ և ծարաւն երբէք հում ջրով չ'պիտի կոտրել, եթէ աղբիւրներ կամ շատ խորը փորած ջրհորներ չ'կան. այլ թէյ խմել կամ եփ տալ ջուրը, սառեցնել և մէջը կարմիր գինի, լիմոն կամ անանուխ խառնել: Միանգամից սառը ջուր և սառն խմելիք չ'պիտի ընդունել: Թունդ խմիչքները լաւ են, բայց դրանց չափազանց գործածութիւնն անչափ վնասակար: է Մարմնի մաքրութիւնը անհրաժեշտ է, բայց շատ սառը բաղանիքը չ'պիտի մտնել, ինչպէս

և վնաս է վաղ առաւօտըն կամ ուշ երեկոյեան, այն էլ ան-
մաքուր տեղերում լողանալ։

Ամեն տեսակ թուլութիւն լուծողութեան ժամանակ կամ
անսովոր ծարաւութեան ժամանակ անմիջապէս պէտք է բժըշ-
կին դիմել։ Լուծողութիւնն է խոլերայի գլխաւոր նշանը, եթէ
փսխումն աւելի արագ է քան լուծելը՝ պիտի լուծողական իւղ
տալ (օգուտ է հիւանդութեան սկզբին) և մինչև բժշկի գալը
անկողին մտնել, ոչինչ կերակուր չուտել, երիցուկի թէյ (ромаш-
ка) կամ անանուխի թրմոց (Fic. menth. 15 կաթիլ) ընդու-
նել, որպէս զի արտաշնչութիւն առաջացնի։ Եթէ լուծումն
սաստկանայ, փորի վրայ լաւէ քսակով կապած տաք մոխիր դնել
կամ տաքացնող թրջաց-փաթեթ (պրիմօչկա) դնել և լաշը հարել։

ՓՈՐԻ ՈՐԴՆԵՐԻ ԴԷՄ ՄԻՋՈՑ մանուկների համար.—Առ
1 չափ օշինդր (փիլին օթու), 3 պճեղ սխտոր և մէկ չափ
կաթի մէջ եփիր և լափայ-խմոր շինիր և մանուկի պորտի
վրայ դիր։

ԱՆՔՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՄԻՋՈՑ.—Մի բժիշկ առաջարկում է,
'ր երեսըբինչի ծայրը լաւ թաց անել և դնել ծոծրակի (зати-
окъ) վրայ, այնպէս, որ գլխի հետևի բոլոր մասը նրանով լի-
'ի ծածկուած, յետոյ երեսըբինչի թաց մասի վրայ էլ ծած-
կել չոր մասը, խոնաւութիւնը երկար մնալու համար։ Այս
հնարքը շատ դուրեկան է և շուտ է ներգործում, նա ուղեղը
թարմացնում է և նարքոտիկական հնարքներից աւելի առող-
ջարար—քաղցր քուն է բերում։ Կարելի է գործածել և տաք
ջուր, իսկ մեծ մասը սառը ջուր է նախամեծարում։ Մտա-
ւոր զբաղմունքով պարապողների, վշտակիրների և ծանր աշ-
խատողների վրայ, որոնք գրգռուած դրութեան մէջ են լի-
նում, այս միջոցը բարերար ազդեցութիւն է ունենում։

ԳՈՐՏՆՈՒԿՆԵՐԻ ԴԷՄ.—Թարմ, թթու նոր կտրած խնձո-
րի տեղը եթէ միշտ ամենայն ճշտութեամբ օրը երեք չորս
անգամ գորտնուկների վրէն քսես—հարես, 7—10 օրուայ մէջ



գորտնուկները փափկանում են կամաց-կամաց փոքրանում և
վերջը բոլորովին անհետանում։

Մ..ՂՐԱՃԱՆՃԻ ԽԱԾՈՒԱԾԻ ԴԷՄ ՄԻՋՈՑ.—Եթէ մեղրա-
ճանճի կծած տեղը սխտորի կամ սոխի հիւթով լաւ թաց
անուի, շուտով անտանելի ցաւը անցնում է և ուռուցքը ան-
հետանում։ Իսկ փուշն էլ հարկաւորութիւն չկայ հանելու,
որովհետև վերոյիշեալ հիւթը իր անվնաս լինելով՝ ցաւի ա-
ռաջն առնում է։

ՍՈՒՐԱՎԱՆԴԻ (золотуха) ԴԷՄ ՄԻՋՈՑ.—Սև հաղարճի (Чер-
ная смородина) տերևները եփ տալ ինչպէս թէյ և ամեն առա-
ւօտ մի-մի բաժակ խմել։

ԳԼԽԻ, ԱԿՌԻՔԻ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՋՂԱՅԻՆ ՑԱՒԵՐԻ ԴԷՄ
հետևեալ նոր գիւտն է տպել «Medical Journal»-ը։ Այն գըլ-
խի ցաւի կողմի քթի ծակին—պնչին, հասարակ աղ փչիր և
խկոյն ցաւը կ'կտրուի։

ՀԱՐԲՈՒԽԻ ԴԷՄ.—Նշադուրի սպիրտով (нашат. спиртъ)
յաճախ հոտ քաշելը երեք օրուայ մէջ ոչնչացնում է սաստիկ
հարբուխն և դրա հետ միասին գլխի ցաւն, որը լինում է
քթի սուր բորբոքման հետ։

ԴԻՖՏԵՐԻՏԻ ԴԷՄ ԱԶԴՈՒ ԵՒ ԱՐԺԱՆ ԴԵՂ.—Մուզիկան-
տով Ռուս բժշկի խօսքով երեխայի կեանքը ազատելու համար
բաւական է 10 կոպ., իսկ հասակով մարդու համար 15 կոպ.։
Կանթարիդնի կօլլօդիում (Collodium cantharidate) դեղից
առնել և հետևեալ կերպիւ գործածել, առաջի կողմը վզին
երեսանց (հագուագիտ դէպքում) և մինչև անգամ վերի մա-
սում մինչև ծծերը (ամենադժուար և վտանգաւոր դէպքե-
րում) փետրով քսում են այս հեղուկը և երբ չորացաւ 5—10
րոպէից, կրկին քսում են և սրանով վերջանում է բոլոր գոր-
ծողութիւնը. մի կամ երկու ժամից քսած տեղում բշտիկ է
յայտնւում ինչպէս մուշկի ժամանակ. այն ժամանակ շնչառու-
թիւնը թեթևանում է և վտանգն անցնում։ Իսկ բշտիկը ինքն

իրան, երկու-երեք օրից անհետանում է, միայն պիտի համբերել, որ վէրքի լուանալով վտանգաւոր հիւանդն էլ առողջանայ։

ՆՈՅՆՊԷՍ ԴԻՖՏԵՐԻՏԻ ԴԷՄ.—Վարշավայում հրատարակուող լեհական թերթերի ասելով, Բուժէ բժիշկը երկար ժամանակ է, որ դիֆտերիտի դէմ գործ է ածում լաւ րոմ։ Բուժէի դիտողութիւններից երեւում է, որ րոմի գործածութիւնը շատ լաւ հետեւանքներ է ունենում. և նա իւր բժշկական գործունէութեան միջոցին, ոչ մի դիֆտերիտով հիւանդ չէ ունեցել որ րոմով բժշկած չ՚լինի։ Նա այդ նպատակով տալիս է մի տարեկան երեխային, ամեն մի երկու ժամից յետոյ թէյի կէս գդալ րոմ, 2—4 տարեկանին մի թէյի գդալ, իսկ 12 տարեկանից վեր՝ սեղանի մի գդալ րոմ։ Հիւանդները նըշանակեալ չափով րոմ խմելուց յետոյ՝ հանգիստ քնում են և աստիճանաբար առողջանում են։ Դիֆտերիտին ճար է անում ինչպէս կիտրոնի քամած ջուրը, նոյնպէս և կիտրոնը այնպէս ուտել։

ԶՂԵՐԸ ՊՆԴԱՑՆՈՂ ՄԻՋՈՑ.—Արտասահմանի մի ամսագրի վկայութեամբ, ոչ մի բան մարդու մարմնին այնքան առողջութիւն չի տալիս և ոչինչ յոգնած ջղերին այնպիսի կազդուրիչ ներգործութիւն չի ունենում, որքան 8 մսխալ նշադիրը խառնած ամեն մի վեդրօ ջրում լողանալը։

ԾՆՆԴԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՐԿԱՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ.—Յայտնի մանկաբարձ բժիշկ Ալէքսանդր Դիւնը, ծննդականներին խորհուրդ չէ տալիս, որ ազատուելուց յետոյ մէջքի վրայ պառկեն, նախ նրա համար, որ զաւակատունը յետ է քաշւում և այսպէսով արգելում է ծնելուց յետոյ տեղի ունեցող սովորական հոսումը և երկրորդ որ զաւակատան անցքում գտնուած դուրս թափուելու մասնիկների շփուելուց, կարող է պատահել, որ քաղցկեղային բորբոքումն առաջանայ (гнилостная воспаленія)։ Սրա համար բժիշկ Դիւնը աւելի պատշաճ է գտնում, որ մանուկի աշխարհ գալուն պէս երեսի վրայ պառկել (ничкомъ), որպէս զի երեխայի ընկերքի դուրս գալը շուտա-



նայ։ Ընկերքի դուրս գալուց յետոյ կարելի է պառկել երկու կողքերի վրայ, միայն թէ ոչ երկար ժամանակ, այլ (շուտ-շուտ շուռումուռ գալով) դիրքը փոխելով։ Իսկ միւս օրն կարելի է նստել, բայց ոչ մէջքի վրայ պառկել։

ՋՐԱՀԵՂՁՆԵՐԻՆ ՈՒՇՔԻ ԲԵՐԵԼՈՒ ԱՄԵՆԱՆՈՐ ԳՏՆՈՒԱԾ ՀՆԱՐՔ.—Ֆրանսիացի յայտնի բժիշկ Լաբորդը ջրահեղձներին ուշքի բերելու համար հետեւեալ միջոցն է առաջարկում։ Պէտք է հիւանդին կռացած բռնել և լեզուն բերանից հանել. հանելուց յետոյ, լեզուից բռնել և այնպէս քաշելով ձգձգել՝ որ շնչառութեան զարկի չափով լինի։ Այսպիսով խեղդուածից կ՚սկսի ջուր թափուել և կամաց-կամաց ուշքի կ՚գայ։ Պէտք է զգոյշ լինել որ չ՚լինի թէ լեզուն ամուր ձգելուց վնասուի։ Այս նշանաւոր հնարքով, բացի Լաբորդի իր արած փորձերից „Орловск. Вѣстникъ“ լրագրի ասելով, Մցէնսկի գաւառի Ալէշնայեա գիւղում պատահել է այդ միջոցով ջրահեղձին ուշքի բերելու հետեւեալ դէպքը։ Խեղդուել էր գիւղացի Սաֆրոնը. Նրան երբ ջրից հանեցին, կեանքի նշոյլ չկար՝ այնպէս որ ժողովածները վճռել էին ձեռք վերցնել Սաֆրոնից համարելով նրան մեռած։ Այդ ժամանակ ժողովականների միջից առաջ եկաւ գիւղացիներից մինը—Պետրուխինը և ասաց որ մի գաղտնիք գիտէ, որի միջոցով Սաֆրոնին կարելի է կեանքի բերել. այդ գաղտնիքը նա Մցէնսկում բժիշկներից էր լսել։ Պետրուխինին թոյլ տուին գործադրել իւր միջոցը և նա բաց անելով Սաֆրոնի բերանը, բռնեց լեզուից, դուրս հանեց բերանից և սկսեց միջոց առ միջոց ձգձգել և գլուխը դէպի վար բռնելով հրամայեց որ Սաֆրոնի փորը մզեն—մերսեն։ Այդպիսով Սաֆրոնի փորից ջուր հոսեց և հինգ րոպէից յետ՝ խեղդուածն սկսեց շարժուել, աչքերը բաց անել։ Աննկարագրելի եղաւ շրջապատողների ուրախութիւնը։ Դրանից յետ Սաֆրոնին անկողնում պառկացրին և սկսեցին մարմինը—լաշը հարել։ Այդ միջոցը բոլորովին ուշքի բերեց Սաֆրոնին։

ՏԱՎԱՐԻՆ ՑԱՒԻ ՎԱՐԱԿՈՒԵԼՈՒՑ ԱԶԱՏ ՊԱՀԵԼՈՒ ՄԻՋՈՑ.— Ցաւի ժամանակ տաւարի ճակատից մինչև ծոծրակը (պօզերի հետ միասին) քսում են հետևեալ դեղը։ Երկու դրվանքայ գարշախունկ (asafetita) և մէկ գրուանքայ քափուր, որքան կարելի է բարակ ծեծել և խառնել 30 ողջ գլուխ (պճեղ չէ) սխտորի հետ, որը առաջուց ջարդաց լինի սխտոր ամանի մէջ։ Յետոյ 15 գրուանքայ մաքուր կուպրը քիչ-քիչ ածել վրէն մինչև որ բոլորը հալուի իրար և դառնայ մի գոյնի օծանելիք։

Այս միջոցը շատ լաւ է ներգործում, որովհետև այս խառնուրդով օծուած տաւարները վարակիչ փոքրիկ կենդանիներից (միազմներից) մաքրուած օդ են շնչում։

ԽՈՐՀՈՒՐԴ ԽՈԼԵՐԱՅԻ ԴԷՄ.—1) Եռացրած ջուր խմել։ 2) Բանջարեղէններ և պտուղներ առանց եռացրած ջրի մէջ ածելուց չուտել։ 3) Փորը տաք պահել։ 4) Առաւօտեանները անօթի տնից չդուրս գալ։ 5) Կանոնաւոր կեանք վարել և աւելորդ բաներից հեռանալ։ 6) Ոգելից ըմպելիքներ չափով ընդունել։ 7) Ամէն տեղ մաքուր պահել։ 8) Բազմամարդ տեղերից և հիւանդներից խոյս տալ։

Յայտնի Ռուս բժիշկ Սիպեագինը ասում է, որ խոլերան բժշկելու համար հարկաւոր է նախ սպանել, ոչնչացնել ախտածին բակտերիան—միկրօբը այնտեղ ուր նա գտնւում է. 2) դուրս վռնդել նրան կազմուածքից, եթէ ոչնչացնելը անկարելի է. 3) ոչնչացնել աղիքների և կազմուածքի մէջ գտնուած թոյնը և 4) որքան կարելի է, հիւանդի ոյժերը պահել և նրան սնունդ տալ։ Սրա համար պէտք է հետևեալ բժշկական միջոցները գործ դնել հիւանդին. տաքացնել, արեան շրջագնացութիւնը և սիրտը գրգռել, իսկ մարմինը շփել սիմպտոմատիկական (ախտանիշական) միջոցներով։

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԽՈՐՀՈՒՐԴ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ։ Որքան կարելի է շուտ հիւանդների մօտից առողջներին



հեռացնել։ Արտաթորելու և փսխելու համար ամաններ դնել, որոնց մէջը ածած լինի կարբոլեան թթւուտ կամ սնդկի աղով (сулема) ջուր։ Սպիտակեղէնները և ամէն տեսակ շոր ու փալասեղէններ, որոնք գործածութեան մէջ են և հիւանդը նրանց դիպչում է, առաջուց պէտք է եռացնել ջրում և յետոյ լուանալ, մահճակալը, անկողինը և միւս իրեղէնները որոնց հիւանդը գործ է ածում, ախտահանութեան կերպիւ, պէտք է մաքրել և լուանալ։ Վարակուելուց յետոյ էլ տան պատերը նորից պէտք է սուաղել և դեղ քսել, հին պաստառներն էլ պատառոտել, պոկել, այրել և նորերը կպցնել։ Հիւանդի սենեակում վատ հոտը մաքրելու համար, պէտք է զանազան ծխանելիքներ ծխել, այլ և պէտք է սենեակը քամու տալ (լուսամուտները և դռները բաց անելով) և այն ամէն իրերը, որոնք վատ հոտ են առաջացնում, հեռացնել, կերակուրն էլ չպէտք է պահել կամ թողնել հիւանդի կացարանում։ Հիւանդին սպասաւորողները որպէս զի չվարակուեն, հիւանդի բնակարանում չպէտք է ո՛չ ուտեն, ոչ խմեն, իրանց գլուխը, մօրուքը և վերնազգեստը խոզանակով պէտք է մաքրեն, որը պէտք է թաց արած լինի կարբոլեան թթւուտի ջրի հետ խառնած ջրով։ Վարակիչ ցաւից մեռածների դիակներն էլ պէտք է շտապել հեռացնել բնակարաններից։



# VI. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՔՈՒՆԸ.—Ննջարանը մութ և լռիկ է լինելու. օդը թարմ և մաքուր. ցերեկները այնտեղ նստելու չէ և կրակ էլ չպէտք է վառել: Անկողինը ոչ խիստ փափուկ պէտք է լինի ոչ շատ տաք: Բարձը շատ բարձր չպէտք է լինի, գլուխը բաց քնելու է, ոտները տաք և գիշերուայ հանդերձները թեթև և կոճակները ազատ:

Քնելուց 2 ժամ առաջ պիտի ընթրել: Անկողնու մէջ չպէտք է շուռ ու մուր գալ, այլ զարթելուն պէս վերկենալ: Չափահաս մարդը 7 ժամից պակաս չպէտք է քնի, իսկ երեխան 7—12 ժամ:

ՔՆԻ ԲԱՐԵՐԱՐ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ.—Ըստ բժիշկ Գոլցինի, հոգեկան հիւանդութեանց մեծ մասը նրանից է առաջանում, որ մարդիկ ջահիլ ժամանակ շատ քիչ են քնել: Պատանեկներին քսան տարեկանից յետոյ էլ ինը ժամ քնելը անպայման անհրաժեշտ է. հակառակ դէպքում, յայտնւում են վաղաժամ բթամտութիւն (перетупленіе) և ուղեղի ու ջղերի գործարանների անժամանակ թուլութիւն (упадокъ).

ՍՆՈՒՆԴ.—Չափազանց աշխատող մարդը օրը երեք անգամ կերակրուելու է, հացը լաւ պէտք է լինի թխած, պտուղները հասածները պիտի ուտել. սալորը, խաղողը, կեռասը և այլ տեսակները աղիքները մաքրում են: Մսերը աշխատողներին աւելի պէտք են քան միւսներին:

Համեմները—պղպեղը, աղը, կինամոնը և միխակը չափազանց չպէտք է գործածել, վնասակար են: Քացախը չպէտք է շատ գործածել, ստամոքսին կ'վնասէ:



ՀԱԳՈՒՍՏԸ—Նեղ չ'պիտի լինի. արեան շրջագարձին և մարսողութեանը կ'վնասեն:

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ.—Այրը առաւել ժամանակի է կարօտ ամուսնանալու քան թէ կինը. կարճահասակները աւելի յարմար են ամուսնանալու քան նրբակազմները. վիզը բարակ, կուրծքը նեղ և ուսերը բարձր ցցուած մարդիկ զգոյշ պիտի լինեն ամուսնանալուց: Կանուխ ամուսնանալը ժամանակից առաջ կ'ծերանայ և սերնդի տկար լինելու պատճառ: Դեռահաս աղջիկների ամուսնանալը վնասակար է: Դեռահասակ երիտասարդը եթէ տարիքն առած օրիորդի հետ կամ որբևայրի կնոջ հետ ամուսնանայ՝ վնասակար հետևանքի կ'հասնի: Նրբակազմ օրիորդը երբ ջղոտ և հսկայ երիտասարդի հետ միանայ՝ շուտով կ'նիհարանայ և դիակի կ'նմանի. նոյնը կ'պատահի ծաղկահասակ երիտասարդին, եթէ իրեն կազմութիւնը գերազանցող օրիորդի հետ ամուսնանայ: Ամուսնական կենաց մէջ երիտասարդը օրիորդից մի քանի տարով մեծ պէտք է լինի: Օրիորդը 20 տարեկան պիտի պսակուի, որովհետև զարգացման կատարելութեան ժամանակն է:

Ամուսնութեան մէջ չ'կայ ոչինչ բան իրար հակառակ, որքան սէրը և ատելութիւնը. կին թէ մարդ երկուսն էլ երևակայութեան և բաղձանքի համար կ'տանջուին:

Ամուսնութեան մէջ կինը երջանկութեան աղբիւր է, եթէ ունի դէպի իր այրը սրտանց սէր. ժիր է գործունեայ, պարզասէր, քաղցրաբարոյ, հնազանդ, մաքրասէր, խնայող և հմուտ է ընտանեկան գործերի. իսկ այրը եթէ ունի դէպի իւր կինը սէր, համեստութիւն, բարեխառնութիւն, աշխատասիրութիւն, խնայողութիւն, չափաւորութիւն և քաղցրաբարոյութիւն, որ ամենայն ընտանեկան և ընկերական երջանկութեան հիմն է: Անպայմայն ընտրելու չէ երբէք ար-

բեցող, խաղամոլ, փառասէր, ծոյլ, ընչասէր և կռուասէր ամուսին։

ԿԵԱՆՔ ԵՒ ՄԱՀԸ.—Առողջութիւնն ու ժամանակը հարստութեան թանգագին է։ Զեղութեամբ կեանքը շուտով է մաշվում։ Առողջութիւնը պահելու համար պէտք է չափաւոր աշխատել։ Զուարճութիւններն էլ պէտք է չափաւոր կատարել։

ՋԱՆԱԶԱՆ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐԻ ՄԱՐՍԵԼԸ (առողջ ստամոքսի).—Բրինձը—1 ժ., ձուն (հումը)—1 ժ. 30 ր., խնձորը—1 ժ. 30 ր., իշխանը (ֆօրէլ)—1 ժ. 30 ր., որսը (դրսի)—1 ժ. 35 ր., դմակը (եփած)—1 ժ. 45 ր., կաթը (եփ տուածը)—2 ժ., հացը—2 ժ., կաթը (հումը)—2 ժ. 15 ր., հնդկահաւը (խորովածը)—2 ժ. 25 ր., բադը—2 ժ. 30 ր., ոչխարի միսը—2 ժ. 30 ր. կարտոֆը (տապակածը)—2 ժ. 30 ր., լոբին (եփած)—2 ժ. 30 ր., ձուն (եփածը)—3 ժ., ոչխարի միսը (եփածը)—3 ժ., տաւարի միսը (խորոված)—3 ժ., հացը (թաժայ)—3 ժ. 15 ր., ստեպղինը (եփածը)—3 ժ. 15 ր., կարտոֆը (եփած) 3 ժ։ 30 ր., իւղը—3 ժ. 30 ր., պանիրը—3 ժ. 30 ր., ձուն (պինդ եփածը)—3 ժ. 30 ր., խոզի միսը (եփածը)—3 ժ. 30 ր., հաւը (խորովածը)—4 ժ., կաղամբը—4 ժ. 30 ր., որսի միսը (եփածը)—4 ժ. 30 ր., խոզի միսը (խորովածը)—5 ժ. 15 ր., հորթի միսը (խորովածը)—5 ժ. 30 րոպէ։

ԳԷՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ ՊԱՀԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ.—Չպէտք է ուտել դմակ, խոզի ապուխտ, չաղ միս, իւղ, սեր, աքար, կարտոֆ, բրինձ և ամէն խմորեղէն. պիտի գործածել ղար տաւարի միս, բուլիօն, պանիր, ձուաներ, դրսի որսի իս, սխտոր, լոբի, կաղամբ, սոխ և թարմ մրգեր։ Կաթը, արեջուրը և քաղցր գինի չպիտի ընդունել. և բոլոր ապիր-ի խմիչքները պիտի շատ քիչ քանակութեամբ գործածել։ այց սրանց փոխարէն կարելի է ընդունել սուրճ, թեյ և



կակաօ առանց շաքարի և կաթի. գէլտերեան և ուրիշ ջրեր կարելի է ընդունել։

ՍՈՒՐՃԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆԸ.—Գիտնական Լինէի կարծիքով, սուրճը աշխատանքը թեթևացնում է և մարդու մկանունքներին երկար ժամանակ ոյժ է տալիս աշխատելու։ Բացի սրանից սուրճը երկար ժամանակ չի թոյլ տալիս կերակուր ընդունել և ջղերի շարժողութեան գործունէութիւնը զօրեղացնում է։

ԿՈՒՐԾՔՆ ՈՒ ԹՈՔԵՐՆ ՈՒԺԵՂԱՑՆԵԼՈՒ ԱՄԵՆԱՀԱՐԱԿ ՀՆԱՐՔ.—Այս հնարքը գտել է մի անգլիացի բժիշկ, որը փորձով իսկ համոզուել է որ, մարդ երբ սագի փետրից շինած խողովակով օդ է ներս շնչում, այդպիսով աւելի մեծ քանակութիւն թթուածին է կուլ տալիս։ Եւ այսպիսով ոչ թէ միայն շնչառութեան գործարաններն են պնդանում, այլ և մարսողութիւնը թեթևանում ու մարմնի բնական ոյժն աւելանում է։ Այս փորձերը գործադրուել են կատաղի հազով տանջուող հիւանդացած երեխաների վրայ, էլ, որոնք այս միջոցի օգնութեամբ կամաց-կամաց առողջացան։



† ԲԱՆԱՍՏԵՂԾ Յ. ԲՈՒԶՈՒԲԷԳԵԱՆ

# VII. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

**Կովի հասակը անսխալ որոշելու հնարք.**—Կովերի եղջիւրները—պօզերը մինչև երեք տարուան հասնելը բոլորովին հարթ են, առանց որ և իցէ փոսերի, վրայ չորրորդ տարին ամեն մի եղջիւրի վրայ յայտնւում են օղակաձև անհարթութիւններ (углюбленія), որոնց կարելի է տեսնել և շօշափել։ Յետոյ մինչև կենդանու կեանքի վերջը, ամեն մի տարի նոր օղակներ է յայտնւում։ Այսպիսով եթէ կովի եղջիւրների վրայ երկ-երկու օղակներ են երևում, ուրեմն կովը մօտ հինգ տարեկան է։ Եթէ չորս-չորս՝ կ'նշանակէ որ եօթը տարեկան է և այլն։ Տաւար վաճառողները ամեն կերպ աշխատում են այս օղակները ոչնչացնել, բայց նրանց այդ չի յաջողւում և երբ եղջիւրներին ձեռը քսուի, իսկոյն ոչ միայն համարւում է,—նկատւում է տարեկան օղակները, այլև յայտնւում է եղջիւրների արհեստական հարթուածքը։

—

**Անձրևորդերը ծաղիկների տակի հողից հեռացնելու միջոց.**—Չորս մաս ջրին մէկ մաս քացախ խառնած օրը երկու կամ երեք անգամ ջրել բոյսերին, որոնց այս հեղուկը—բաղադրութիւնը բացի վնաս չըտալուց՝ նաև հողը ազատում է որդերից։

—

**Որպէս զի տարուայ ամեն ժամանակներում հաւերը ձու ընեն՝** խորհուրդ են տալի հաւերի կուտին մանրացած ոսկրէ փոշի խառնել։

—

**Կովերի կաթը առատացնելու համար** մի անգլիացւոց ամսագիր խորհուրդ է տալիս, քիչ թէփ խառնած թեթև (քիչ) աղ արած ջուր խմացնել ամեն առաւօտ։

—

**Ցուրտը տարած կարտօֆը բարելաւացնելու հնարք.** — Կարտօֆը ածել սապատի մէջ և դնել երկու-երեք ժամ գնացող սառը ջրի մէջ։ Կարտօֆը իսկոյն և եթ իր բնական դրութեանը կ'դառնայ։

—

**Թարմ ձուն որոշելու հեշտ միջոց.**—Եթէ 16 մաս հասարակ աղը հալեցնենք մի գինու շիշ ջրի մէջ, և այդ ջրի մէջ նոյն օրուայ ձուն դցենք, իսկոյն տակը կ'անէ. առաջի օրուանը մի փոքր պակասում է յատակին հասնելու. երեք օրուան ձուն լողում է այդ աղաջրի մէջ. իսկ որքան ձուն հին է, այնքան աւելի վերև է բարձրանում և թեթև է լողում այս աղաջրի երեսին։

—

**Մկների դէմ միջոց.**—Քափուրի հոտին մկները ամենևին չեն դիմանում, սրա համար էլ մկներ գտնուած—յաճախած տեղերում, եթէ մի քանի կտոր քափուր դնուի՝ մկները բոլորովին կ'անհետանան։

—

**Ջրի սպիտակ մեծ շիշերը մաքրելու հեշտ միջոց.**—Հում կարտօֆը մանր կտրել և երկու բաժակ քացախով թթուացրած ջրի հետ ածել, աղտոտ շշի մէջ և ամեն կողմը



լաւ հարելուց յետոյ, մաքրած շիշը հասարակ ջրով ողողել։

—

**Եղոտած շշերը մաքրելու կերպը.**—Սրճի մնացորդը - տականքը տաք-տաք ածել աղտոտ շշերի մէջ մինչև քառորդը և ամեն կողմից լաւ հարել։ Այսպիսով իւղոտ շշերը այնպէս կ'մաքրուին, որ միայն մաքուր ջրով ողողելը կ'մնայ։ Բայց սրճի մնացորդը չ'պէտք է շատ նոսր և ջրալի լինի, այլ թանձր։

—

**Խոտը փթելուց և ամեն տեսակ եռ գալուց ազատ պահելու հնարք.**—Խոտը պահելու համար, այն տեղերում որտեղ պիտի դիզուի, նամանաւանդ խոնաւ տեղերում, պիտի ցանուի բարակ ծեծած և լաւ չորացրած հասարակ աղ, որը խառնած պիտի լինի ամեն մի չորս փթին կէս-կէս գրուանքայ. իսկ ամեն մի դիզին մէկ-մէկ գրուանքայ չորս փթին։ Աղը վնասուած խոտին մինչև անգամ բարելաւացնում է և փթած խոտը դարձնում է հեշտ մարսելու, ինչպէս թարմ խոտ և կենդանիները նրան ախորժակով են ուտում։

—

**Թխսերի նստելու ժամանակամիջոցը.** — Եթէ $30^0/_{35}$ Րէօմիւրի ստիճան տաքութեան մէջ ձուները դրուին, հաւինը 21 օրում ձագ կ'հանի, բադինը (утка) 28 օրում, սագինը 30 օրում, հնդկահաւը 25 օրում։

—

**Պտղատու ծառերը որդերից ազատելու հնարք.** -- Ամերիկայում գտան մի զարմանալի և հասարակ հնար, որը հետևեալն է։ Ամեն ծառի պէտք է վեց-վեց հատ երկաթի մեխ խփել։ Նրանց երկաթի մեխերը ծառի մէջ ժանգոտելով առաջացնում են թթուութիւն, որը տարածւում է ծառի ամեն մասերում, որից որդները խորշում են։

—

**Կաթնատու կովերի նոր նշաններ.**—Շվէյցարացի Օսկար-Գեսը տնտեսների ուշադրութիւնը դարձնում է ողնաշարի վրայ գտնուած մի փունջ մազի վրայ։ Այս փունջը ամեն մի կենդանու վրայ զանազան դրութեամբ է լինում։ Քանի նա մօտ է մէջքի ողին, այնքան կաթնատու է։ Եթէ այս փունջը գտնւում է մէջքի վեցերորդ ողից յետոյ՝ այն ժամանակ նրանք շատ դիմացկուն են լինում և ժամանակով դըրանցից օգտուելու կենդանիք են դուրս գալու։ Գեսը 30 հատ կովի վրայ փորձեց այս նշանները և 29 կովի վրայ ճըշմարտացաւ. իսկ մի կովինը, թէև գերազանց կաթնատու էր, բայց այդ փունջը գտնւում էր ոչ թէ ետևը, այլ ընդհակառակը։

—

**Ցանելու սերմերի աճելը շտապեցնելու միջոց.** — Պիտի այդ սերմի հատիկները մի փոքր ժամանակ թողնել իւղի և պատաշի խառնուրդի մէջ, որից յետոյ պէտք է ցանել։ Առաջին շերտերի սերմերը կսկըսեն շատ ծլել։ Մինչև անգամ այնպիսի սերմերը, որոնք ծլում են հետևեալ տարին, այս միջոցով աւելի շուտ են աճում։

—

ՋԱՆԱԶԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՑՂՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԸ։

Ձիու յղանալուց մինչև ծնելը տևում է $48^1/_2$ շաբաթ կամ 340 օր։<br>
(պատահում է և 330 կամ 419 օր. էլ)։<br>
Կովը . . . . $40^1/_4$ շաբաթ կամ 285 օր.<br>
(լինում է բացառութիւն 240--321 օր. և ս)<br>
Ոչխարը. . . 28 շաբաթ կամ 150 օր.<br>
(պատահում է 146—198 օր.)<br>
Այծը . . . . $28^1/_2$ շաբաթ կամ 253 օր.<br>
Խոզը . . . . 17 շաբաթ կամ 120 օր<br>
(բացառութիւն լինում է 109 կամ 133 օր)<br>
Շունը. . . . 9 շաբաթ կամ 63—65 օր.<br>
Կատուն . . 8 շաբաթ կամ 56—60 օր.

—

**Կենդանիներին ճիաճանճերի և այլ մանրը կենդանիների խածելուց ազատելու հնարք.** - Մէկ մասն մաքրած կարբոլեան թթուութիւնից խառնել վեց մաս Ձէյթունի իւղի (деревяное масло) հետ և քսել կենդանիներին լծելուց առաջ. ականջների մէջը պիտի սերտ քսել։

# VIII. ՏԱՆՏԻԿԻՆ

**Ջրի մաքրելու միջոց.**— Բնալոյծ Սէն-Մարտէնը գտել է հասարակ միջոց, ամեն տեսակ, մինչև անգամ փչացած—հոտած ջուրը գործածելու համար պիտանի դարձնելու: Ութ վեդրօ ջրի մէջ, երկու հում ձուի սպիտակուց ածել և ջուրը տաքացնել լաւ եփ գալով, որով ձերմակուցը մէրուելով հաւաքում է իր մէջ ջրի մէջ լողող կեղտը: Այս ջուրը եփ տալուց յետոյ պիտի կտաւով քամել և բարձր տեղից ածել տակը դրած ամանում, որպէս զի ջուրը օդի հետ շփուի: Այս միջոցով, ամեն ջրհորի ջուր կարելի է պիտանի անել գործածելու համար:

—

**Քաթանէ (ПОЛОТНО) գործուածներից մրգեղէնների բծերը հանել.**—Բիծը թեթև թաց պիտի անել ջրով. յետոյ բծերի վրայ վառած ծծմբի լուցկին այնպէս պիտի բռնել, որ քաթանից գոլորշին բարձրանայ, բայց այնպէս որ քաթանը չայրուի, սրանից յետոյ բիծը ջրով պիտի լուանալ: Այս հնարքի ժամանակ սապոն չպիտի գործ ածել: Ուրիշ կերպ էլ կարելի է բիծը հանել, մի րոպէ եռացրած կաթի մէջ ցցելով:

—

**Միս պահելու կերպ.**—Նապոլեոնիայում միսը շատ չը փչանալու համար թարմ միսը դնում են ֆարֆարէ ամանի մէջ և վրան տաք ջուրն այնպէս են ածում, որ ամբողջ միսը ջրի տակը մնայ: Ջրի սառչելուց յետոյ վրէն ածում են մի որև է բոյսից հանած քիչ ձէթ, որպէս զի երեսին բարակ փառ կապի և յետոյ այս բոլորը դնում են սառը տեղ: Յայտնի է, որ այս եղանակով պահած միսն օդը դժուարութեամբ կ'հասնի, որը և չի փչանայ օդի հաղորդակցութիւնից: Տաք ջուրն մսի սպիտակուցը պնդացնում է, իսկ ձէթի շերտը—փառը, օդի անցնելու ճանապարհը փակում է:

—

**Պատուհանների քրտնելու դէմ հնարք.**—Պէտք է մի քանի անգամ տաք ջրով լուանալ, ջրի հետ շատ քիչ գլիցերին խառնելով:

—

**Լամպաների լուսաւոր և մաքուր այրելու լաւ միջոց.**—Ամէն մի ֆունտ նաւթին մի թէյի գդալ ամենահասարակ լաւ չորացած հասարակ աղ պիտի խառնել:

—

**Կծուած խողը համովացնելու հնարք.**—Երբ որ խոզն իր ժամանակին կտրվին աղ չի լինում արած՝ վերջը կծւում է—համը փոխւում է: Սրա համար, խոզն կրկին իր համը տալու համար պիտի կրկին հալել և երեսի փրփրող քափը քաշելով մէջը ցցել ամեն կողմից լաւ այրուած մի կտոր հացի կլեպ-քերինջ (կեղև չոր տեղից): Մի քանի րոպէից յետոյ խոզը կորցնում է թէ



իւր վատ համը և թէ հոտը. իսկ հացի կեղևը ստանում է վատ հոտ:

—

**Մլակների դէմ հնարք.**—Որպէս զի սենեակը մլակներից մաքրուի, պիտի մի կտոր քափուր (camphora) այրել, որի հոտից մլակներն խեղդւին և եթ դուրս են փախչում. կամ սենեակում գիշերները լապտերներ են դնում, որոնց ապակիների վրայ մեղր են քսում, որի վրայ դէպի լոյսը թռչող մլակները և այլ թիթեռները կպչում են:

—

**Սենեակից և ներքնատներից մրջիւններին հեռացնելու հեշտ միջոց.**—Ծաղիկների ամանների տակին շաքար կամ ջմեռի ջուր ածա, որի հետ խառն լինի թթու խմոր կամ դրօժ, որը պէտք է դնել շատ մրջիւններ գտնուած տեղում: Մրջիւններն այդ հոտից այնպէս են խորշում և կորչում, ինչպէս մահադեղից:

—

**Տան խոնաւութեան դէմ.**—Սենեակների մէջ օգտակար է պահել դժլապատ (ПЛЮШЪ) բոյսը, որը այնպիսի յատկութիւն ունի որ պատի խոնաւութիւնը չորացնում է և բնակարանների օդը բաւականին լաւ մաքրում:

—

**Թունդ քացախ.**—Եթէ մէկ մաս գլինեքարին (քացախի թթւուտին) 5 մաս ջուր խառնուի, շատ թունդ քացախ կ'ստանայ:



Հիմնադիր Բարեգործական Ընկերութեան
ԲԺԻՇԿ Բ. ՆԻՍՍԱՐԴԵԱՆ

# IX. ԳԻՒՏ և ԱՐՈՒԵՍՏ

**Ձիերին նալնելիս հանգիստ պահելու հնարք.**—Այն ձիերին, որոնք նալնելիս հանգիստ չեն մնում, առաջարկում են մաղդանոս (պետրուշկա) բոյսի խըլից մի փոքր վերցնել և ձեռքի ափի մէջ տրորելով. հարելով տանել ձիերի ռնգների — քթածակերի մօտ, որի հոտից ձիերը հանգստանում են։ Պէտք է սաել, որ շատ ձիեր ու հոտառութիւն ունին և մի քանի հոտաւէտ նիւթեր նրանց շատ դուր է գալիս, ինչպէս օդի-կօլօնի անոյշ հոտը։

—

**Տարօրինակ անդամահատութիւն.**—Փարիզի ակադեմիան յայտնեց որ փայծեաղային հիւանդութեամբ տանջուող մի 53 տարեկան կնոջ անդամահատեցին՝ փայծեաղի մնացած տեղը։ Հիւանդը վեց շաբաթուայ միջոցում առողջացաւ։

—

Ամերիկայի շատ քաղաքներում արդէն սկսել են բնակիչներին խողովակներով, բացի ջրից և կաթնից, մատակարարել նաև ձմեռուայ ժամանակ սենեակները տաքացնելու համար՝ տաքութիւն, իսկ ամառը սենեակը հովացնելու համար սառն օդ։

—

Գիւտերի ստեղծող հանճարեղ Էդիսոնը վերջերս իր հնարած հեռախօսին այնպիսի հնարագիտութեան է հասցրել, որ բաց տան դռներին կպցնելով իսկական շների հաչոցների ձայն է հանել տալիս, և եթէ մինը առանց տանտիրոջ գիտութեան կամենայ դուռը բաց անել, անմիջապէս, շների աղաղակ կ'լսի և հաչոցի ձայնից, իր մտադրութիւնից կը հրաժարուի։

—

**Մշտական պատանի մնալու գաղտնիքը.**—„Istorie“ լրագիրը ինչպէս հաղորդում է, գիտնական դօկտ. Գալլը 72 տարեկան է, բայց 30 տարեկանի տեսք ունի։ Վերջերս մարդու մէկը խնդրեց նրան յայտնելու այդ իր մշտական պատանի մնալու գաղտնիքը։ Այս բոլորովին գաղտնիք չէ — պատասխանեց դօկտ. Գալլը։ Չը ծերանալու համար հարկաւոր է օր ու գիշերուայ մէջ 10 ժամից պակաս չքնել, պէտք է ուտել, եթէ կարելի է կամաց և ընկերութեան մէջ. օրը երեք ժամից աւելի չաշխատել. ամէն տեսակ մտաւոր աշխատութեան՝ ոչ թէ յոգնելուց, այլև լարուելուց պէտք է այնպէս խուսափել ինչպէս ժանտախտից։ Այսպիսի կանոններով ամէն մարդ կարող է իր երիտասարդութիւնը արտաքին տեսքով գոնէ շարունակելու, մինչև խորին ծերութիւնը։

—

**Բռնկուած նաւթը հանգցնելու հնարք.**—Եթէ միշտ մի գինու շիշ նշադրի-ոգի (նաշատիրնի սպիրտ) տանը պատրաստ պահուի և մի որևիցէ իր կրակից բռնկուի, անմիջապէս այս հեղուկը վրան ածելով, սրա ամիաքի շոգին մի ակնթարթում կրակը հանգցնում է։ Այս հնարքը խոհանոցներում աւելի յարմար է պահելու, որտեղ միշտ լամպաներն մաքրում պատրաստում և վառում են։

# X. ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԵՆԴԱՆԻ ԱՆՁՆԱԹԱՂՈՒՄ.—Կենդանի տեղով իրեն թաղելը հնդկացի ֆակիրների (հնդկական դերվիշ) մէջ հազուադէպ երևոյթ չէ։

Ահա թէ ինչպէս է կատարւում մեզ անհնարին թուող այդ երևոյթը։

Սրբի փառք ու հռչակ վայելելու տենչանքով տոգորուած՝ հնդկացի ֆակիրը դիմում է անձնաթաղման սարսափելի փորձանքին այս ձևով։ Ոտներն իրարից կպցնելով՝ նստում է սաւանի վրայ ու ինքնազդման միջոցով այնպիսի մի դրութեան է հասնում, որ մահանալուց ոչնչով յետ չի մնում։

Այդ միջոցին նրա օգնականները շտապում են ֆակիրի ականջները հալած մոմ ածել, շնչառութեան բոլոր անցքերն զգուշութեամբ կալնում են, լեզուն ոլորելով սեղմում են շընչափողի բերանին. յետոյ մարմինը փաթաթում են քաթանով, որը կապ են գցում գլխին, կնքելով այդ կապը։ Բաց դրանից կնքում են համ դագաղը համ գերեզմանը. խարդախութիւն, կամ խաբել անհնարին է. վեց շաբթից յետ ստուար հետևորդներով գալիս է կրօնապետը—Խաջան։ Սրա ներկայութեամբ կտրում են կնիքները, փորում են գերեզմանն ու հանում դագաղը և բամբակալած քաթանը պոկում են մումիա դարձած մարմնից։

Նայում ես մարմնին՝ մոխրագոյն, գարշացած, կուչ եկած անշարժ բորբոսնած դիակ է դարձել։

Մահացած ֆակիրի օգնականները մումիայի գլխին տաք

ջուր են ածում, որ թլացած՝ կախ ընկած է լինում ուսերին։ Ապակիացած աչքերի կոպերը բաց են անում. ցորենի ալիւրից կեծացրած խաշիլ դնում գանգին. ականջների մոմը հանում, տեղն են դցում լեզուն, որպէս զի շնչառութեան դռները բացուին, և, վերջապէս, եռանդով սկսում հարել, տրորել մարմինը։

Կարճ միջոցից յետ ամբողջ մարմնով թեթև դող է անցնում, որին հետևում է իսկոյն զարկի խփելը. այդպիսով, չորացած, մեռած դիակը բոլորովին կենդանանում է։

Զարթնած Ֆակիրը վեր է նայում իրեն շրջապատող ամբոխի մէջ, որոնք աննկարագրելի զարմանքով ու պատկառանքով նայում են նրան։

Ֆակիրի վրայ նայելուց անմիջապէս յետոյ, հրաւիրում են սեղանի և սուրբ մարդին պարգևատրում են թանկագին իրեղէններով։

Հնդկաստանում վանքերի տեսակ առանձին հիմնարկութիւններ կան, որտեղ աստիճանաբար մարդկանց սովորեցնում են մեզ անհնարին թւող այդ տանջանքին։ Առաջ նրանց մի երկու օրով քարանձաւում փակում են, որպէս զի սովորեն կամաց կամաց շունչ պահելը, տարածութեան ու ժամանակի վրայ ունեցած գաղափարը կորցնեն, որ այդպիսով մեռնել սովորեն։

Անգլիացոց ճանապարհորդները դեռ անցեալ դարու վերջերումն էր, որ տեղեկութիւններ էին տալիս Ֆակիրների մասին. բայց նրանց հաւատացող չկար, մինչև որ Բրեդ գիտնականը չգտաւ հիպնոտիզմը, մինչև որ Տաուսինդ անգլիացու այդ մասին տուած տեղեկութիւնը չը վերստուգեց, և մինչև չապացուցեց որ այդ երևոյթը հիպնոտիզմի ծագում ունի։ Պրէյեր պրօֆէսորը հրատարակած ունի Բրեդի գիրքը, որոնց մանրամասնօրէն բացատրում է այդ մթութեան քօղով ծածկուած երևոյթները։

* * *



ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԱՀԱՐՈՒՍՏ ԿԻՆԸ—Չիլիայումն է (Ամերիկայում), անունը Իսիդօրա Կուզինօ։ Նա իր կարողութիւնը չի կարողացել դեռ որոշել, որոնք բաղկացած են հողերից, կենդանիների հօտերից և իլխիներից, նաւերից, հանքերից, զուտ ոսկիներից և թանկագին քարերից։ Միմիայն հանքերից նա ստանում է արդիւնք 16,000 ֆունտ ստերլինգ, որ մեր փողով անում է 200,000 րուբլի։ Ինքը 35 տարեկան է և մտադրութիւն էլ չունի նորից ամուսնանալու։

ՋԱՆԱԶԱՆ ՑԵՂԻ ՊԱՏԿԱՆՈՂ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՍԱԿԸ—Մշահաւը 9 տարի, հաւերը 10 տ., սև-մշահաւը 12, փասիանը (մրտահաւը) 15, ջրածիտը 15, արտուտիկը 18, սոխակը 18, աղաւնին 20, կանեփածիտը 23, դեղձանիկը 24, կռունկը 24, սիրամարգը 24, դաշտի արտոյտը 30, ճնճղուկը 40, սագերը 50, թութակը 60, արագիլը 60 տ., ագռաւները, կարապները և արծիւները 100 տարի։

ՄԱՅՐԱԿԱՆ ՇԱՏԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ.—Բժիշկ Գրագամ Բէլլը պատմում է, որ մայրը իր նորածին մանկան հետ խօսելով, ամենայն օր 35,000 խօսք է արտասանում։ Ամենազարմանալին այն է, որ այդքան խօսքերից երեխան առհասարակ ոչ մի խօսք չէ հասկանում։

ՄԱՐԴՈՒՍ ԱՊՐԵԼՈՒ ԻՍԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ.—Եթէ ընդունենք որ մարդ ապրում՝ է մինչև 50 տարին և դրանից հանենք այն ժամերը՝ երբ մարդիկ կեանքի հակառակ են գործադրում, կարելի է այսպէս դասաւորել։ Մինչև իր կեանքի տաս տարին մարդս ապրում է անգիտակցաբար . 87,000 ժամ

Քնելու համար (եթէ օրուգիշերուայ մէջ գործադրէ 7 ժամ) . . . . . . . . 127,750 ժամ

Ճաշը և ընթրիքը (ժամուկէս հաշուած). 32,850 »

Զարդարուելը, բաղնիքը, լուացուելը . 35,250 »

Փռշտալ և խնչելը (օրը տաս րոպէ) . . 1,825 »

Հիւանդութիւն թեթեւ (տարուայ մէջ
թէկուզ 8 օր) . . . . . . . . . . . . 11,200 ժամ
Ուրիշ հարկաւորութիւններ (օրը 40 րոպէ) 7,300 »

Ընդամենը 293,173 ժամ

Այս հաշուից երեւում է, որ մարդ իր կեանքի հակառակ գործ է անում 293,173 ժամ կամ 33 տարի եւ սրանից դուրս միայն իր լիակատար իրաւունքի եւ կարգադրութեան համար մնում է միայն 16 տարի։

ՎԱՅՐԵՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ.—Առաւելապէս տիգրները եւ դրսի կատուները (լէօպարդները) Հնդկաստանում անցեալ տարի պատառոտել են 2,460 մարդ, 64,500 ձի եւ այլեւայլ ընտանի կենդանիներ։ Զանազան տեղեկութիւններից էլ երեւում է, որ 1892—1893 թուականի ժամանակամիջոցում անգլիական հնդկական գաղթականութեան մէջ միայն ոչնչացրած է մինչեւ 14,000 տիգրներ եւ այլ վայրենի կենդանիներ։ 1890 թ. օձերին միայն զոհ են գնացել 20,000 մարդ, չնայելով որ տեղացիք էլ իրանց կողմից մինչեւ կէս միլիոնից աւելի օձեր են ոչնչացրել։

ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԹՌՉԵԼՈՒ ՍՐՆԹԱՑՈՒԹԻՒՆԸ.—Բազէն (соколъ) մի ժամում թռչում է 225 մղոն, տուլաշը (галка) թըռչում է—115 մղոն, աղաւնին թռչում է—60 մղոն։

ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԾԱՅ.—Գալաթայի գիւղացի 160 տարեկան Արաբ-Օսմանին, որի երկարակեցութիւնը հիմնուած է պաշտօնական թղթերով, տաճկաց Սուլթանը իբր ընծայ մինչեւ ցմահ թոշակ ստանալու իրաւունք տուեց։

ՀՌՈՄԱՅ ՊԱՊԻ ԼՈՒՄԱՆ.—1889 թ. Հռոմայ Ս. Պետրոս եկեղեցւոյ հաշուից երեւում է, որ Պապի գանձարանը մտել է երեք միլիոն ֆրանկ (1888 թուականից 150,000 ֆր. պակաս)։ Աւստրիայից 400,000 ֆր., Իտալիայից 355 հ., Ֆրանսիայից 350 հ., Իսպանիայից 200 հ., Գերմանիայից 180 հ., Պորտուգալիայից 150 հ., Անգլիայից 955 հ., Հիւս.-Ամերիկայից 285 հ., Հարաւ. Ամերիկայից 310 հ., Աֆրիկայից 95 Ասիայից 100 հ., Ռուսաստանից եւ Սկանդին. 100 հ., միայն Լեհաստանից 85,000, իսկ Տաճկաստանից, Յունաստանից, Սերբիայից եւ Ղարադաղից ոչ մի կոպէկ չի ուղարկուել։



ԱՅԺՄ ԽՕՍՈՒՄ ԵՆ ԵՐԿՐԱԳՆԴԻՍ ՎԵՐԱՅ անգլիերէն 125 միլիոն հոգի, ֆրանսերէն 50 միլ., գերմաներէն 70 միլ., իսպաներէն 40 միլ., ռուսերէն 70 միլ., իտալերէն 30 միլ. եւ պորտուգալերէն 13 միլ. հոգի։

ԿԷՏ ՁԿԱՆ ՈՅԺԸ ԵՒ ՇԱՐԺՈՒՄԸ.—Ըստ երկրաչափ Գեդերսի, 80 ֆուտ (ոտնաչափ) երկարութեամբ 74 տօն կշռող կէտ ձուկը, որի պոչը 20 ֆուտ հաստութիւն ունի, մի ժամում վազում է 12 ծովային միլ, այսինքն 21 վերստ։ Այսպիսի սրնթացութեան համար շարժուող ոյժ կարելի է ստանալ 145 ջուխտ ձիուց։

ՄԱՅՐ-ՄԵՂՈՒՆ երեք ամսուայ ընթացքում 1,000,000-ից աւելի ձու է ածում։

ՍՆԱՆԿԱՆԱԼՈՒ ԴԷՄ ՄԻՋՈՑ.—Չինաստանում 900 տարուայ միջոցում ոչ մի գանձարան (բանկ) չգտնուեց, որը մերժէր իր պարտքերը վճարելու։ Այս նրանով է բացատրւում, որ Խի-Ցլունկա կայսրի հրամանով, ինչ բանկ որ սնանկանալու լինէր, այն բանկի կառավարչին, վերակացուին եւ գանձապահին պիտի գլխատէին եւ այն փողոցի անկիւններում կախուած ի ցոյց պիտի դրուէին, իրանց բանկի հաշուեմատեանների հետ։ Այս հրամանը դեռ եւս գործադրւում է—ոյժ ունի եւ Չինաստանի բանկերը մինչեւ այժմ իրանց պարտաւորհակները ամենաճշտութեամբ կատարում են։



ՊԱՐՍԿԱԿԱՆ ԴԱՎՐԻՇ

# XI. ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

1) Համաշխարհային նշանաւոր անցքերի եւ պատմութեան։

Քրիստոսի ծննդից առաջ։

14000 Աշխարհիս ստեղծագործութեան սկիզբը—ըստ գիտնականաց։
5509—Ըստ Աստուածաշնչի։
5490—Ըստ Հրէից։
3258 Ջրհեղեղ։
2941 Չինացւոց տառերի գիւտը։
2640 Նինուէի հիմնելը։
2492 Հայ ազգի սկզբնաւորութիւնը։
2300 Եգիպտոսի թագաւորութ. սկիզբը։
2000 Մետաքսի գործածութիւնը։
1700 Եգիպտացւոց մեհենական գրերը։
1750 Բաբելոնի աշտարակաշինութ.
1651 Մովսէս մարգարէն ծնւում է։
1600 Ապակիի գիւտը։
1500 Աթէնքի հիմնարկութիւնը։
1200 Դարբնական արուեստի սկիզբը։
1150 Տպագրութիւնը Չինաց մէջ։
1056 Դաւիթը թագաւորում է։
1017 Սողոմոնը թագաւորում է։
1010 Սողոմոնի տաճարի շինութիւնը։
1000 Փայտի վրայ փորագրութեան ըսկիզբը։
982 Սողոմոնի մահը։
800 Արծաթ փողի գործածութիւնը։
802 Ասորեստանի թագաւորութեան անկումը։
754 Հռոմուլոսը հիմնում է Հռոմը։
721 Իսրայելացւոց թագաւ. անկումը։
585 Երուսաղէմի աւերումը և տաճարի այրումը Նաբուգոդոնոսորից։
560 Կիւրոսը հիմնում է Պարսից տէրութիւնը։
558 Կոնփուկիոսը ծնվում է։
552 Բուդդայականութեան սկիզբը Հնդկաստանում։
523 Աստուածաշունչը թարգմանվում է յոյն լեզուով 70-ից ձեռքով։
469 Սոկրատէսը ծնվում է։
384 Արիստոտէլը ծնվում է։
356 Աղէքս. Մակեդոնացու ծնունդը։
325 Աղէքս. Մակեդոն. Հայաստանի վերայով արշաւելը Հնդկաստան։
315 Չինական պարսպի շինութեան սկիզբը։
300 Մաղաղաթի թուղթը հնարում են։
» Հռոմում հնարում են աղիւսի շինելը։
160 Չինացիք բամբակից թուղթ են շինում։
110 Հռոմայեցիք հնարում են սապոն եփելը։
76 Կիկերոնի ժամանակ Տիրոնը հնարում է շուտ գրելու ձևը։
70 Վեզուվ հրաբուխի ժայթքումը Հերքուլանում և Պոմպէի քաղաքների աւերումը։

Քրիստոսից յետոյ։

Յս. Քրիստոսը ծնվում է։
2 Հռոմում շինում են առաջին ջրբաղացը։
34 Յս. Քրիստոսը խաչվում է։
» Հայերը ընդունում են քրիստոնէութիւնը։

41 Առաքեալները գրում են աւետարանը:
60 Հռոմայ մէջ Ներոն թագաւորի ժամանակ շինվում է ապակիի (ամանեղէնի) առաջին գործարանը:
70 Տիտոս կայսրը աւերում է Երուսաղէմը:
97 Յովհաննէս աւետարանիչը գրում է Եփեսոսում աւետարանը:
135 Հրէայք սկսում են ցրուել ամբողջ աշխարհում:
210 Հռոմում առաջին անգամ, լուսամուտների մէջ ապակի է դնվում:
300 Մեղրամոմից ճրագ են շինում:
303 Սուրբ Էջմիածնի հիմնելը:
306 Մեծն Կոստանդիանոս թագաւորում է:
321 Մարտի 7-ից Կիւրակին տօնելը սկսվում է:
325 Առաջին տիեզերական Սբ. Ժողովը Նիկիայում Կոստանդիանոսի օրով:
328 Կ. Պօլսոյ հիմնարկութիւնը.
381 Կ. Պօլսոյ տիեզերական Սբ. Ժող.:
400 Եւրոպայի եկեղեցեաց մէջ զանգակի գործածութիւնը սկսվում է:
431 Եփեսոսում երրորդ տիեզերական Սբ. Ժողովը:
451 Քաղկեդոնի ժողովը:
476 Հռոմէացւոց կայսրութեան անկումը:
496 Ֆրանկները ընդունում են քրիստոնէութիւնը:
550 Շերամի որդն ու մետաքսը առաջին անգամ Եւրոպայ է բերվում:
570 Մահմեդը ծնվում է:
636 Եւրոպայում եղեգէ գրչի տեղ փետրէ գրիչ են սկսում գործածել:
637 Արաբացիք տիրում են Երուսաղէմին:
650 Լատինացւոց եկեղեցեաց մէջ երգեհոն գործածելը սկսվում է:
711 Իսպանիան գրաւվում է Արաբներից:
807 Չինացւոց պէս Եւրոպայի մէջ էլ թղթի գործածութիւնը սկսվում է:
850 Արաբացիք շաքար շինելը հնարում են:
855 Սլաւոնական այբուբենի գիւտը:
870 Յունաց և կաթոլիկաց եկեղեցիները բաժանվում են միմեանցից:
1022 Կուիտօ Եւրոպայի երաժիշտը նօտան հնարում է:
1072 Երուսաղէմին տիրում են Սելջուկները:
1086 Խաչակրաց արշաւանքի սկիզբը:
1171 Եւրոպայի Վինէննայ քաղաքի մէջ բացվում է առաջին դրամատունը:
1246 Առաջին բժշկական ուսումնարանը Ֆրանսիայում:
1291 Խաչակրաց վերջին արշաւանքը:
1299 Ֆլորենցիայում սկսում են ակնոցները շինել:
1301 Կողմնացոյցի գիւտը:
1308 Շվէյցարական հասարակապետութեան հիմնուելը:
1330 Գուտենբերգը, Ֆաուստը և Շեֆերը Մագունտիոյ մէջ տպագրութիւնը հնարում են:
1338 Վառօդը գտնում են:
1365 Սսեղը հնարում են:
1380 Թնդանօթի գիւտը:
1384 Լէնքթեմուրի արշաւանքները Ասիայում:
1415 Հուսին այրում են:
1440 Հռոմի Ս. Պետրոս եկեղեցւոյ հիմնարկութիւնը:
1450 Եւրոպայի մէջ առաջին գիրքը տպվում է:
1453 Տաճիկները տիրում են Կ. Պօլսին և վերջանում է Բիւզանդական կայսրութիւնը:
1464 Նամակատուն և փօստայով թղթատարութիւնը հաստատվում է Ֆրանսիայում:
1473 Կոպերնիկոսը ծնվում է Տօրնում



1483 Սկսվում է գործադրվել Ինկվիզիցեան:
1492 Կոլոմբոսը գտնում է Ամերիկան (Ուրբաթ օրը, Հոկտեմբերի 13-ին):
1493 Կոլոմբոսը Ամերիկայից եգիպտացորեն է բերում Եւրոպայ:
1500 Ծոցի ժամացոյցը հնարում են:
1524 Առաջին ձեռագիր լրագիրը Վիէննայում:
1546 Լիւտերը վախճանվում է:
1552 Ամանների կլեկելը հնարւում է.
1590 Դիտակը գտնուեցաւ Գերմանիայում:
1610 Թէյի գործածութիւնը սկսւում է Եւրոպայում:
1615 Առաջին տպագիր լրագիրը:
1616 Շէքսպիրը մեռնում է:
1642 Գալիլէն մեռնում է:
1689 Շոգեշարժ մեքենաների գիւտը:
1711 Դաշնամուրը հնարում են:
1727 Նիւտոնի մահը:
1752 Ֆրանկլինը հնարում է Շանթարգելը:
1779 Օդապարիկը հնարում են:
1785 Ժօրժ Ստեֆենսոնը առաջին շոգեկառքը շինում է:
1789 Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը:
1790 Գալվանը հնարում է գալվանեան ելեքտրականութիւնը:
1800 Ջօնսոնը գտնում է մարմնի պատուաստումը:
1801 Վիմագրութեան գիւտը:
1803 Անգլիացիք մետաղէ գրիչը հնարում են:
1803 Շոգենաւի գիւտը:
1805 Շիլլերի մահը:
1810 Նապոլէոնի արշաւանքը դէպի Եւրոպայի-արեւելք:
1812 Արագատիպ մամուլի հնարելը:
1821 Նապոլէօն I-ը մեռնում է:
1839 Տաբլոթ անգլիացին հնարում է լուսանկարը:
1841 Առաջին հեռագիրը շինում են Վաշինգտոնից Բալտիմօր:
1848 Ելեքտրակ. հեռագիրը հնարում են:
1851 Առաջին ռեվօլվերը շինվում է:
1852 Նապոլէօն III-ը Կայսր է հրատարակվում:
1853 Արեւելեան պատերազմը:
1861 Իտալական թագաւորութեան միացումն և Վիկտոր-Էմմանուէլի թագաւոր հրատարակուելը:
1862 Սուէզեան ջրանցքի բացումը:
1865 Գերմանական դաշնակցութիւնը և Աւստրօ-Պրուսական պատերազմը:
1867 Ամերիկայից Անգլիայ, Ատլանտ. ովկիանոսի վրայով հեռագիրը շինում են:
1868 Հնդկաստանի հեռագիրը Կովկասի վերայով շինվում է:
1870 Ֆրանս-պրուսական պատերազմը և Նապօլէօն III-ի գերութ. Սեդանում:
1870 Իտալիան վերջնականապէս գրաւվում է Հռոմը:
1873 Վիէննայի համաշխարահանդէսը:
1875 Հերցեգովինիայի ապստամբութիւնը:
1877 Ռուսաստանը պատերազմ է հրատարակում Տաճկաստանին:
1877 Էդիսօնը հնարում է ֆօնօգրաֆը:
1878 Սան-Ստեֆանօյի դաշնադրութիւնը
1878 Բերլինի դաշնադրութիւնը:
» Ռումանիան անկախ թագաւորութիւն է ճանաչվում:
» Սերբիան անկախ թագաւորութիւն է ճանաչվում.
» Չարադաղը անկախ թագաւորութիւն է ճանաչվում:
» Բօլղարիան Վասալական իշխանութիւն է ձեռք բերում:
1879 Ելեքտրական լապտերների վառելը հնարում են:
1880 Տելեֆօնի գիւտը:

1881 Բուլղարիայի իշխ. Ալ. Բատենբերգը միացնում է և Ռումելեան Բուլղարիայի հետ։
1889 Փարիզի համաշխարհահանդէսը։
1893 Չիկագոյի (Ամերիկայում) համաշխարհահանդէսը։
1894 Եապոնեան պատերազմ է հրատարակում Չինաստանին։

## 2) Ռուսաց և Վրաց.

### Նշանաւոր անցքերը

Քրիստոսից յետոյ։

40 Թուլին Անդրէաս Առաքեալը ու Սիմոն Քանանացին Վրաստանում մտցնում են Քրիստոնէութիւնը։
304 Պարսիկները ձեռնարկում են Տփխիսի Նարիղալա բերդի շինութիւնը։
446 Վրացիք սկսում են գործածել մեր Ս. Մեսրոպի հնարած այբենարանը (խուցուրին)։
597 Վրացիք հայերից բաժանվում են։
623 Հերակլ վրաց Թագաւորը առնում է Հայաստանի մի մասը, Ատրպատականը և Շիրվանի խանութիւնը։
862 Ռուսաց տէրութեան սկիզբը։
988 Ռուսները Ս. Վլադիմիրի առաջնորդութեամբ ընդունում են յոյներից Քրիստոնէութիւնը։
1010 Բագրատ Թագաւորը Վրաստանում և Իմերեթում եկեղեցիներ է հիմնում (Մցխեթում)։
1011 Թարգմանվում է վրաց լեզուով առաջին աւետարանը։
1212 Թամարայ Թագուհու մահը։
1222 Նիժնի-Նովգորոդի հիմնելը։
1224 Չինգիս-խանի յարձակմունքները և ռուս իշխաններին իրան հպատակեցնելը։
1238 Մոնղոլական լծի սկիզբը։
1289 Օսերը Գօրի քաղաքն այրում են։
1328 Մոսկվայի Թագաւորութ. սկիզբը։
1428 Հրաձգակ զէնքերի գործածութիւնը Ռուսաստանում։
1469 Վրաց Թագաւորութիւնը բաժանվում է երեք մասերի՝ Քարթլ, Իմերէթ և Կախէթ։
1480 Ռուսաստանը ազատվում է Մոնղոլական լծից։
1491 Առաջին տպուած գիրքը սլաւոնական լեզուով հրատարակվում է։
1518 Պարսից Իսմայիլ-Շահը առնում է Տփխիսը և Մցխէթը։ Հալաբարի կարմինջի մօտ էլ մզկիթ է շինում։
1524 Մակարիայի տօնավաճառի բացումն։
1535 Շահ-Թամազը առնում է Տփխիսը։
1547 Յովհաննէս Գրօզնին առնում է առաջին Թագաւորի տիտղոսը։
1556 Հաշտարխանի թագաւորութեան անկումը։
1563 Մոսկվայում սկսվում է տպագրութիւնը
1583 Ռուսները առնում են Սիբիրը։
1589 Ռուսաց պատրիարքութեան բակիզբը։
1611 Լեհացիք առնում են Մոսկվան, Շվեդացիք Նովգորոդը։
1612 Ռուսաստանն ազատվում է լեհերից։
1617 Շահ-Աբաս Ա.-ը աւերում է Վրաստանը և շատ վրացիներ տանում է իւր հետ Պարսկաստան։
1632 Առաջին կանոնաւոր զօրքը Ռուսաստանում։
1634 Վրաստանում մահմեդականութեան մուտք գործելը։
1664 Ալէքսէյ Թէյմուր շինում է ախթո ռանխտ քաղաք։
1672 Ծնվում է Ռուսաց Մեծն Պետրոս Կայսրը։
1700 Ռուսաստանում սկսվում է տարեգրութիւն (յունվարի 1-ին) Քրիստոսի ծննդից։



1701 Առաջին Թատրոնը Ռուսաստանում։
1703 Առաջին լրագրի հրատարակելը Ռուսաստանում։
1705 Քաղաքական գրերի տպագրութիւնը Ռուսաստանում։
1709 Վախտանգը հիմնում է Տփխիսում տպարան, սկսում է գրել վրաց պատմութիւն և տպում է գրքեր։
1716 Ալանացիք Քարթլը ու Կախեթը աւերում են։
1723 Մահմադ-Ղուլի խանը աւերում է Տփխիսը և կողոպտում է Սիօնի եկեղեցին։
1724 Վախտանգը տանում է իւր հետ Ռուսաստան Պետրոս Մեծի հրաւէրով 5 եպիսկոպոս, 6 վարդապետ, 5 սարկաւագ և 140 աշխարհական։
1725 Մեծն Պետրոս Կայսրը մեռնում է։
1743 Մահուան պատիժը ոչնչանում է։
1752 Թէյմուրազ Թագաւորը հալածում է պարսիկներին Երևանից և նորա բնակիչներին բնակեցնում է այժմեան Հավլաբար Թաղում։
1754 Առաջին բանկի հիմնելը Ռուսաստանում։
1755 Մոսկվայում առաջին համալսարանի բացումը։
1767 Ծաղկի պատուաստելը մտցնվում է Ռուսաստան։
1768 Թղթէ փողի գործածութիւնը Ռուսաստանում։
1769 Հերակլէն, Գօրի, Սղնախ, Թելաւ, Բորժօմ և ուրիշ տեղեր բերդ է շինում, հիմնում է տպարան, զինարան, Թնդանօթ է ձուլում, կարում է դրամ, և գրքեր է տպում։
1788 Անտօն Ա. Թարգմանիչ և լեզուագէտ կաթողիկոսը վախճանվում է։
1785 Կովկասի փոխարքայութեան հիմնելը։
1786 Պետական բանկի հիմնելը։
1795 Աղա-Մահմադ խանը յարձակվում է Տփխիսի վերայ և աւերում։
1799 Վրաց Գիօրգի XIII-ը յանձնում է Վրաստանը Ռուսաստանին։
1801 Վրաց և ռուսաց մէջ 10 յօդուածից բաղկացած դաշնագրի ստորագրելը։
1802 Ռուսաստանում Մինիստրութիւնը հիմնւում է։
1804 Մինգրելեան և Իմերէթը միանում են Ռուսաստանի հետ։
1809 Ֆինլանդիան միանում է Ռուսաստանի հետ։
1814 Ռուսները մտնում են Փարիզ։
1815 Լեհաց Թագաւորութեան միացումը Ռուսիայի հետ և Վիեննայի գեսպանաժողովը։
1830 Առաջին և մեծ խօլերան Ռուսաստանում։
1837 Պուշկինի մահը։
1841 Լերմոնտովի մահը։
1844 Կռիլովի մահը։
1844 Վորոնցովի փոխարքայ նշանակուելը։
1859 Կովկասեան 69-ամեայ պատերազմների վերջանալը և Շամիլի գերի առնելը։
1861 Ստրկութեան ոչնչացումը։
1864 Կովկասի վերջնականապէս նուաճումը։
1866 Մեծ իշխ. Միխայել Նիկ. փոխարքայ նշանակուելը։
1877 Ռուս-Տաճկական պատերազմը։
» Նեկրասովի մահը։
1878 Սան-Ստեփանոյի դաշնադրութեան ստորագրելը։
1882 Վրաց վերջին շառաւիղը-հայազգի Մարիամ Թագուհին մեռնում է և Թաղվում Տփխիսի Հայոց Վանքի եկեղեցւոյ հիւսիսային կողմը պատի տակ։
1883 Տուրգենեւը մեռնում է։

1888 Կայսր Ալեքսանդր III-ը այցելում է Կովկասը, Կայսրուհւոյ և Թագաժառանգի հետ:
1894 Կայսր Ալեքսանդր III-ը ի Տէր հանգեաւ Լիվադիայում:

## 2) Հայոց պատմութեան

### նշանաւոր անցքերը.

Քրիստոսից առաջ:

5509 Աշխարհիս ստեղծագործութիւնը:
3258 Ջրհեղեղը:
3257 Նոյ նահապետը տապանն է մտնում:
2492 Հայ ազգի սկզբնաւորութիւնը.
2346 Հայոց տէրութիւնը սկսւում է:
» Արայը հայոց առաջին թագաւոր:
149 Սկսւում է Արշակունեաց թագաւորութիւնը Վաղարշակից:

Քրիստոսից յետոյ:

30 Աբգար Հայոց թագաւորը նամակ է ուղարկում Քրիստոսին:
34 Թադէոս Առաքեալը Ս. Գեղարդը տանում է Հայաստան, մկրտում է Աբգարին և ժողովրդին:
50 Թադէոս Առաքեալը նահատակւում է:
51 Ս. Թադէոսի Եղիշէ աշակերտը նահատակւում է Արցախում (Գիշ գիւղում):
60 Թադէոսի աշակ. Ստաթէոսը Սիւնիքում նահատակւում է (Տաթև):
62 Բարդուղիմէոս Առաքեալը նահատակւում է Աղբակում:
79 Երևան քաղաքի հիմնարկութիւնը:
197 Վաղարշը հիմնում է Վաղարշապատը:
253 Խոսրով թագաւորը հիմնում է Դավրէժ քաղաքը (Թաւրիզ):
257 Ս. Գրիգոր Լուսաւորչի ծնունդը:
303 Ս. Էջմիածնի շինութիւնը:
» Արիստակէս Հայրապետը Նիկիոյ Ս. ժողովից բերում է «Հաւատոյ հանգանակը»:
» Ս. Գրիգորիսը Աղուանից կաթողիկոս է կարգւում:
406 Մեսրոպը գտնում է հայոց գիրը:
» Արշակունեաց թագաւորութիւնը վերջանում է:
451 Վարդանանց պատերազմը (յունիսի 2-ին):
452 Կաթողիկոսական Աթոռի փոխադրումը Ս. Էջմիածնից Դուին:
458 Վարդանայ դուստր Շուշանիկը նահատակւում և թաղւում է Տփխիսում (Մետեխի եկեղում):
539 Եղեսիայում յայտնւում է, Քրիստոսի Աբգարին ուղարկած դաստառակը:
551 Մովսէս կաթողիկոսի հրամանով Աթ. Տարօնացին յօրինում է եկեղեցական տօմարը:
653 Կարգւում է Վարագայ Ս. Խաչի տօնը:
706 Արաբացի Կաշմ ոստիկանը Նախիջևանի եկեղեցում 800 հայ իշխաններին կրակով նահատակում է:
924 Կաթողիկոսական Աթոռը Դուինից Վասպուրական է փոխադրւում:
961 Անին դառնում է Բագրատունեաց մայրաքաղաք: Բագրատունեաց թագաւորութեան սկիզբը:
968 Խոսրովանոյշը հիմնում է Սանահնոյ և Հաղպատայ վանքերը:
993 Կաթողիկոսական Աթոռը Վասպուրականից Անի է փոխադրւում:
» Բագրատունեաց թագաւորութիւնը վերջանում է:
1080 Ռուբինեանք նորոգում են Հայոց թագաւորութիւնը Կիլիկիայում:
1147 Կաթողիկոսական Աթոռը տեղափոխւում է Անիից Հռոմկլայ—Կիլիկ.
1173 Ներսէս Շնորհալու մահը:
1294 Կաթողիկոսական Աթոռը փոխադրւում է Սիս:



1311 Երուսաղէմում սկսվում է հայ-ազգի պատրիարքութիւնը:
1323 Անի քաղաքի կործանումը:
1393 Հայոց ազգի թագաւորութեան վերջանալը:
1441 Կաթողիկ. Աթոռը վերջնականապէս փոխադրւում է Ս. Էջմիածին:
1461 Կ.Պօլսի պատրիարքութեան սկիզբը
1513 Երևանը գրաւվում է Տաճիկներից:
1567 Վենետիկում տպագրւում է առաջին հայերէն Սաղմոսը:
1603 Շահ-Աբասի հայերին գերի տանելը Պարսկաստ.—(Ջուղայի գաղթելը):
1785 Սիմէօն կաթողիկոսը Ս. Էջմիածնում տպարան է հիմնում:
1781 Նոր-Նախիջևանի հիմնելը:
1784 Հայոց առաջին լրագրի հրատարակութիւնը Հնդկաստանում:
1789 Շուշուայ ամրոցի հիմնելը:
1798 Ղարաբաղից 1100 ընտանիք գաղթում են Ղզլարու կողմերը:
1799 Առաջին պարբերական հրատարակութիւնը Վենետիկում «Տարեգրութիւն» անունով:
1813 Մոսկվայի Լազար. ճեմ. բացումը:
1823 Հայր Միքայէլ Չամչեան վարդապետը (պատմագ.) վախճանւում է:
1825 Ներսէս Ե աշտարակեցի կաթող. հիմնում է Ներսիսեան դպրոցը:
1828 40 հազար հայ գաղթում է Ռուսաստան:
1837 Հաստատւում է Ս. Էջմիածնի Սինօդը:
1839 Երևանի թեմական դպրոցի հիմնուելը:
1842 Ղարաբաղի թեմական դպրոցի բացուելը:
1850 Հայոց առաջին թատրոնը Թիֆլիսում:
1857 Ներսէս Ե կաթողիկոսը վախճանւում է (փետրվարի 14-ին):
1858 Խալիբեան ուսումնարանի բացումը:
1858 «Մեղու Հայաստանի» լրագրի հրատարակութիւնը:
1860 Հաստատւում է Տաճկահայոց սահմանադրութիւնը:
1861 Չէյթունցիք ապստամբում են:
1863 Բագուի Մարդասիրական ընկերութիւնը հիմնւում է:
» Միքայէլ Նալբանդեանցի մահը:
1868 «Արարատ» ամսագիրը հրատարակւում է Ս. Էջմիածնում:
1869 Տփխիս. բացւում է Ս. Գայիանեան հայ օրիորդաց միջնակարգ դպրոցը:
1872 «Մշակ» լրագիրը հրատարակւում է:
1873 Ս. Էջմիածնում բացւում է Գէորգեան ճեմարանը:
» «Փորձ» ամսագ. հրատարակւում է:
1875 Նոր-Նախիջևանի թեմական դըպրոցի բացումը:
1877 Մարիամեան—Յովնանեան օրիորդական դպր. բացումը Տփխիսում:
1878 Ռուսները մտնում են Կարին:
» Բեռլինում ստորագրում են Հայոց ինքնավարութեան 61-րդ յօդ.
1879 Վերադառնում են Հայաստանեաց եկեղեցու ծոցը 35 ընտանիք հռովմէական հայք՝ Մ. Օրմանեան վարդապետի առաջնորդութեամբ:
» Ստ. Նազարեանը վախճանւում է:
1881 Տփխիսում հիմնւում է Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, նախ. Բ. Նաւասարդեանի:
» «Արձագանք» շաբաթաթերթը հրատարակւում է:
1882 Տփխիսում կայանում է Հայոց առաջին ընդ.ուսուցչական ժողովը:
» Վախճան. Գաբ. եպ. Այվազովսկին:
» Կատարւում է «Մեղու Հայաստանի» լրագրի 25-ամեայ յոբելեանը:
1884 «Նոր-Դար» ամենօրեայ թերթը հրատարակւում է:
1887 Անդրկովկասում տարածւում է հայերի մէջ ևս զինուորագրութիւնը.

1888 Մակար Ա. Կաթող. ընդունւում է Տփխիսում Կայսեր Աղէքսանդր III-ից և Կաթողիկոսը այցելում է Բագու և Գանձակ քաղաքներին:

1888 Յայտնի վիպասան Րաֆֆիի մահը:

1889 Պարսից Շահ-Նասրէդինը Փարիզի աշխարհահանդէսից վերադառնալիս այցելում է Ս. Էջմիածին:

1889 Մատենագիր և ուսուցչապետ Ս. Պալասանեանցի մահը:

» Արևելագէտ Քերովբէ Պատկանեանի մահը:

» «Մուրճ» ամսագիրը հրատարակ.

1890 Իտալացւոց Թագաժառանգին Ս. Էջմիածնում Մակար Կաթողիկոսն ընդունում է:

1891 Վախճանւում է Մակար I կաթող.

» Մկրտիչ Էմինի մահը Մոսկվայում:

» Բարեգործ Մ. Սանասարեանի մահը:

» Յայտնի դերաս. Ադամեանի և երգիծաբան Պարոնեանի մահը:

1892 Ջրօրհնեաց հանդիսի ժամանակ Տփխիսի վանքի եկեղեցու շինած ժամանակաւոր կամրջի խորտակուելուց 40 հոգի խեղդւում են Կուր գետում, հոգևորականութիւնն ազատւում է:

» Կովկասում խօլերայի կոտորածը:

» Մայիսի 5-ին Ս. Էջմիածնայ Համազգային նշանաւոր ժողովը Խրիմեան Հայրիկին միաձայնութեամբ (72 ձայնով) և Մատթէոս եպ. Իզմիրլեանին (52 ձայնով) կաթողիկոսական թեկնածուներ ընտրեց:

» Վախճանեցաւ Գամառ-Քաթիպայ հայոց յայտնի բանաստեղծը:

» Խորէն-Նարբէյ և Գ. Սրուանձտեան սրբազանների մահը:

» Հրապարակախօս Գրիգոր Արծրունու մահը:

» „Հայրիկը“ Կաթողիկոս օծուեցաւ:

» «Մշակը» հրատարակւում է Ս. Քալանթարի խմբագրութեամբ:

1894 «Նոր-Դար» լրագրի տասնամեակը և Ս. Սպանդարեանի 20-ամեայ գործունէութեան յոբելեանը:

» Գէորգ եպ. Սուրէնեանը, Վրաստ. և Իմերեթի թեմի առաջնորդ նշանակուեցաւ:

» Թրքա-Հայաստանում սարսափելի սովից և ցաւից ժողովուրդը գաղթում է դէպի Կովկաս:

» (28 յունիսի) Կ. Պօլսում սարսափելի երկրաշարժ, որից աւելի հայերը վնասուեցան:

» Սասունի և Եօզղատի հայերի ապստամբութիւնը:



# XII. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

## I.

ԵՐԿՐԱԳՆ. ՄԱԿԵՐԵՒՈՅԹԸ 509,950,714 քառակ. կիլօմետր է:

ՑԱՄԱՔԸ երկրագնդիս մօտ $^1/_3$ մասն է կազմում—2,468,804 հող 6,802,634 ջուր:

ՈՎԿԻԱՆՈՍՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԽՈՐՈՒԹԻՒՆԸ.—Ատլանտեանը 3,790, Հնդկականը՝ 3,444. Մեծ-խաղաղականը՝ 4003, Հարաւային կիսագնդինը 3,390 մետր:

ՆՇԱՆԱՒՈՐ ԼԵՌՆԵՐԻ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆԸ.—Էվերէստ 29,000 ոտնաչափ, Դավալագիրի 25,171, Էլբօրուս 1,800, Արարատը 17,000, Կազբէկը 15,000, Արագածը

ՆՇԱՆԱՒՈՐ ԳԵՏԵՐԻ ԵՐԿԱՐՈՒԹԻՒՆԸ: Միսիսիպին 5,890 կիլօմետր, Նեղոսը 5,640, Ամազօնը 5565, Եանգ-ձէ-կեանգը 5,410, Օբը 4,230, Ամուրը 4,155, Վոլգան 3,500, Դանուբը 3,042, Դօնը 1,807, Ուրալը 1,520, Ռէյնը 1,370, Սենան 600, Թեմզան 325 կիլօմետր:

ԼՈՒՍՆՈՅ ՀԵՌԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐԻՑ 362,334 վերստ է: Լուսնոյ չափը երկրից 50 անգամ փոքր է: Թէ որքան ժամանակամիջոցում երկիրս կարող է կերակրել մարդկութեանը Ս. Ռովէնշտէյնն ասում է, որ 2072 թուին երկիրս կունենայ ամենաքիչը 5,994,000,000 հոգի բնակիչ: Այս ժամանակից յետոյ երկիրս այլ ևս չի կարող կերակրել այսպէս շատ բազմացող բնակիչներին. (Ի հարկէ այս ենթադրութիւն է և ոչ թէ հաստատ ճշմարտութիւն):

## II.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՄԻՋԻՆ ԹԻՒԸ:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Մինչև | 60 տ. հասն. | են | 100-ից | 6 | մարդ |
| » | 80 » | » | 500 | 1 | » |
| » | 100 » | » | 1000 | 1 | » |

Մեռնում են տարէնը 33 միլ. այսինքն ամեն օր 96 հազար մարդ, ամեն մի ժամում 3730 մ. ամեն մի րոպէում 60. մի վայրկեանում մի հոգի:

Ծնւում են ամեն տարի 42 միլ. այսինքն 9,500,000 աւելի, քան մեռնում են:

Պսակւում են 82 միլ., 120 մարդուն մի պսակ է գալիս:

ՊՍԱԿՈՒԱԾԸ ԵՒ ԱՄՈՒՐԻՆ.—Ըստ բժիշկ Կինեսի, ամուսնացած մարդը աւելի հեշտ 60 տարուան կ'հասնի քան թէ ամուրին 45 տարուան. պսակուածների $^1/_4$ մասն է ապրում մինչև 70 տարի, իսկ ամուրիների $^1/_{20}$ մասն է հասնում: Ամուսնացածների երկարակեցութիւնը ընտանեկան կեանքի պայմանների առաւելութիւններով է բացատրւում:

ՄԱՐԴՈՒՍ ՄԱՐՄԻՆԸ ունի մօտաւորապէս 3,831,248 ծակոտիք և ամեն մի քառակուսի դիւյմի վրայ գալիս է՝ ճակատին 1,258, կզակներին 548, վզին 1,303, կրծքին 1,136, ծոծրակին 417, ձեռքի ափին 2,736, մատներին 1,740, ոտի ներանին 2,685: Ամառուայ շոգօրը մարդուս մարմնից, այս ծակոտիքներից դուրս է հոսում 15—20 կիլօ-

գրամ ջուր,—քրտի՛նք, թուք, արցունք և այլն։

ՄԱՐԴՈՒ ՄԱԶԵՐԻ ԹԻԻՆ Է ՄՕՏ 127,920։

ՈՐՔԱ՞Ն Է ՈՒՏՈՒՄ ՄԱՐԴՍ։ Մինչև 70 տարի՛ն հասած մարդը ուտում է 20 վագո՛նից աւելի՝ կերակուր, այսի՛նքն մօտ 80,000 կիլօ. 25,550 օրում։

## III.

### ԵՐԿՐԱԳՆԴԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ։

Երկրագնդիս վերայ բնակւում են մօտ 1,510 միլիօն բնակիչ, որոնցից Եւրոպայում 349 միլ., Ասիայում 897 միլ, Աֆրիկայում 204 միլ. Ամերիկայում 121 միլ. և Աւստրալիայում 5 միլիօն։

Երկրագնդիս ազգերը խօսում են 3600 լեզուից աւելի։

Բոլոր կրօնները երկրագնդիս վերայ 1000-ից աւելի են։

ԵՒՐՈՊԱՅԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ՑԵՂՈՎ։

ՍԼԱՎԵԱՆԵՐՆ են 94,355,000—(սրանցից 65 միլ. ռուսներ և ռութեններ, 11 միլ. լեհեր, 7 միլ. չեխեր, մօրաւներ, 10 միլ. սերբեացիք, բօլգարներ և կրօատներ)։ ՌՕՄԱՆԱԿԱՆ ԿԱՄ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱԶԳԵՐԸ — 98,948000 հոգի։ (Սրանցից ֆրանսիացիք 40 միլ. իտալացիք 30 միլ. սպանացիք և պօրտուգալացիք 23 միլ. ռումանացիք 9 միլ.։ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱԶԳԵՐ—115,130,000. (սրանցից գերմանացիք և հօլանդացիք 63 միլ. անգլիացիք 40 միլ., սկանդինաւեցիք 9 միլ.)։ ՀԱՅԵՐԸ 5 միլիօն են։ Հրէաները մօտ 9 միլիօն։ Կրօնով ամբողջ երկրագնդի վերայ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ։

| | | | |
|---|---|---|---|
| Կաթոլիկներ | 235 միլ. | | 469 |
| Բողոքականներ | 134 » | | |
| Ուղափառներ | 91 » | | |
| Այլ և այլ քրիստ. | 10 » | | |
| ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐ | — | » | 171 |
| ՀՐԷԱՆԵՐ | — | » | 9 |
| ԿՌԱՊԱՇՏՆԵՐ | | | |
| Բուդդայականներ | 486 » | | 862 |
| Բրամինականներ | 139 » | | |
| Ֆետեշներ | 235 » | | |
| Ընդամենը | | | 1511 |

## IV.

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ համարւում են, Լօնդօն 5,190,000 բնակիչ, Պեկինը 4,500,000, Փարիզ 2,228,806, Վիեննան 1,136,270, Բեռլին 1,125,000, Կ. Պօլիս 830,000, Նէապօլ 450,000, Պետերբուրգ 929,000, Մոսկուայ 754,103։

ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԹԻԻԸ։ Ռուսաստանում—9, Իտալիայում—21, Գերմանիայում—20, Ֆրանսիայում—14, Անգլիայում—12, Իսպանիայում—10, Հոլանդիայում—3, Շվէյցարիայում — 3, Շվէցիայում—2, Ռումանիայում—2։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ։ Եւրոպայի վեց մեծ պետութեանց.—Պրուսիայինը 316 միլ. ֆրանկ, Աւստրիայինը 319, Իտալիայինը 382, Ֆրանսիայինը 797, Անգլիայինը 746, Ռուսաստանինը 620։ Ընդամենը 3078 միլիօն։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԶՕՐՔԸ (նշանաւոր տէրութեանց) խաղաղ ժամանակ 3,263,474 հոգի։ Ռուսաստանում 876,838 հ. Ֆրանսիայում 512,472 հ. Գերմանիայում 491,840, Աւստրիայում 290,106, Իտալիայում 240,915, Անգլիայում 221,358, Տաճկաստանում 182,000, Իսպանիայում 131,400, Շվեցիայում 33,020 հոգի։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ Եւրոպայի միայն հինգ մեծ տէրութեանց զօրքերի թիւը հասնում է մինչև 21,000,000 միլ.

ԵՒՐՈՊԱՅԻ ԾՈՎԱՅԻՆ զօրքը բաղկացած է 191,000 հոգուց։

Երկաթուղիների գիծը Եւրոպայում մօտ 188,593 կիլօմետր է։

Հեռագրաթելի երկարութիւնը Եւրոպայում 1,440,698 կիլօմետր։



Եւրոպայում տուրքը ամենից շատ վճարւում է Ֆրանսիայում և ամենից քիչ Ռուսաստանում։

Երկրագնդիս վերայ գտնուած պարբերական թերթերի թիւը մօտ 36,000 է։ Եւրոպայում 20,000, Ասիայում 3,000, որից 2,000 Ճապօնիայում), Աֆրիկայում 200, Միացեալ Նահանգներում 12,500։ Աւստրալիայում 700, Գերմանիայում 5,500, Ֆրանսիայում 4,092, Անգլիայում 4,000, Իտալիայում 1,400, Իսպանիայում 850, Ռուսաստանում 800, Յունաստանում 600, Շվէյցարիայում 450 և այլն։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԾԱԽՔԸ զանազան երկրներում։—Բեռլինի պրօֆ. Ֆօն-Կաուֆմանի քննութիւնից երևում է, որ ժողովրդական լուսաւորութեան համար ամեն մի մարդին գալիս է՝ հետևեալ տէրութիւններում։—

| | |
|---|---|
| Պրուսիայում | 7.72 |
| Ֆրանսիայում | 6.63 |
| Անգլիայում | 6.30 |
| Աւստրիայում | 4.15 |
| Իտալիայում | 3.06 |
| Ռուսաստանում | 1.13 |

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐԵՐԻ ԹԻԻԸ տարուայ մէջ, զանազան երկրներում.—Ռուսաստանում աշխատանքի կամ բանւորական օրերի թիւը 267 է. անգլիացիները տարուայ մէջ աշխատում են 278 օր, սպանիացիները—290, աւստրիացիները—295, իտալացիները—298, բաւարացիները—300, սաքսոնցիները և ֆրանսիացիները — 302, զուիցարիացիները, դանիացիները և նորվեգիացիները—305, հօլանդացիները, միացեալ-նահանգները և ամերիկացիները—308 օր և ունգարացիները—315 օր։

## ՀԱՅԵՐԻ ԹԻԻԸ

| | |
|---|---|
| ա) Տաճկա-Հայաստանում. | 1,765,000 |
| » Եւրոպական | 287,000 |
| » Միջագետքում | 12,000 |
| » Կիլիկիայում. | 244,000 |
| » Եգիպտոսում | 9,200 |
| » Մնացեալ Փոքր-Ասիայում | 689,000 |
| բ) Ռուսաստանում Եւրոպական (և Սիբիրիայում) | 185,000 |
| » Անդր-Կովկասում. | 1,380,000 |
| գ) Պարսկաստանում մօտ. | 174,000 |
| դ) Հնդկաս. և Ասիայում | 48,000 |
| ե) Ռոմանիա և Բուլգարիա | 14,500 |
| զ) Հունգարիա և այլ Եւրոպական երկիրներում | 15,900 |
| է) Ամերիկա (հարաւային և հիւսիսային)։ | 12,750 |
| ը) Երկրագնդի այլ և այլ մասերում՝ մօտ | 9,200 |
| | 4,841,660 |

Պօլսում հայերի թիւը մօտ 240—260,000 է հասնում։

Տփխիսում. . . . . . . . . 60— 65,000

Իսկ 1888 թւի ժողովրդագրութեամբ, պանդուխտների թիւը, Կ. Պօլսում հասնում էր . . . . . . . . 50,000

Տփխիսում և Բաթումում. 15,000



ՄՇԵՑԻ ՍՈՎԵԱԼՆԵՐ

# XIII. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ

## ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՑԵՆԶԻ ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստր կոմս Դելեանովը մշակել է մի նոր ծրագիր որով այսուհետև վարժուհիները պէտք է քննութիւն տան, երբ ցանկանան ուսուցչական իրաւունք ձեռք բերելու։ Իգական սեռի անձինք կարող են քննութիւն տալ հետևեալ կոչումներ ստանալու համար. ա) Տնային վարժուհու. բ) Կրթական հաստատութիւնների ուսուցչուհու. գ) Օտար լեզուի մասնաւոր վարժուհու և դ) Ուսումնարանների մէջ օտար լեզուի ուսուցչուհու։ Քննութիւն կարող են տալ բոլոր 17 տարեկան օրիորդները, չնայելով սովորել են նոքա որև է դպրոցում թէ ոչ։

Սկզբնական դպրոցի վարժուհու կոչում ստանալու համար պահանջւում է հետևեալը. կրօն իգական գիմնազիոնների կուրսով. համառօտ եկեղեցական պատմութիւն, ռուսաց և եկեղեցական սլավեան լեզու (քաղաքային դպրոցների ծրագրով), թուաբանութիւն (քաղաքային դպրոցների ծրագրով), մեթոդիկա (սկզբնական ռուսաց լեզուի գրագիտութիւն տարածելու), աշխարհագրութիւն Ռուսաստանի, աշխարհագրական և պատմութեան համառօտ դասընթացը։

## ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՆՈՆ։

Լուսաւորութեան մինիստրի կարգադրութեամբ ոչ մի դասագիրք չի կարող փոխարինուել նորի երկու տարուց վաղ առաջ։ Ամեն մի առարկայի դասերի շրջանը (կուրսը) կամ նրա մի մասը պիտի վերջացնել այն դասագրքով, որոնցով որ սկսուած է. դասագրքերի փոփոխութիւնը ևս առաջարկվում է մանկավարժական ժողովներին և ոչ թէ միայն մասնաւոր դաս տուողներին և այն էլ մինչև ամառուայ արձակուրդները։ Այս «կանոնը» վերաբերում է ամեն միջնակարգ դպրոցներին։

(«Պրավիտ. վեստ.» յուլիս 1891 թ.)

# XIV. ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԵՐԿՐԱԳՆԴԻՍ ՆՇԱՆԱՒՈՐ ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ և ԱԶԳԵՐԸ ԻՐԱՆՑ ԵՐԿՐՆԵՐՈՎ.

| | Անուններն: | Տիրապետող կրօնք: | Պետութեան գլուխը: | Տարածութիւնը ք. քիլ. | Բնակչաց թիւը: | Մայրաքաղաքները: |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Արաբիա | Մահմեդական | Նահապետական | 2,300,000 | 3,000,000 | Սիվան |
| 2 | Արգենտին. Հաս. | Քրիստոնէակ. | Նախ. Լուիս Պենա | 2,835,969 | 4,000,000 | Բուր-Այրէս |
| 3 | Անամ | Անգղ. եկեղ. | Մեօրիէ Տամ-Տայ | 230,000 | 21,000,000 | Գուէյի |
| 4 | Անգլիա | » „ | Վիկտորիա կայս. | 314.628 | 36,000,000 | Լօնդոն |
| | » գաղթակ. | » » | „ „ | 24,964,096 | 180,000,000 | |
| 5 | Աւստրօ-Հունգ. | Կաթոլիկ | Ֆրանց-Յովսէփ | 676,667 | 38,000,000 | Վիեննա |
| 6 | Աւղանստան | Մահմեդական | Աբդուրահման | 550,660 | 4,000,00) | Քաբուլ |
| 7 | Բելուժստան | Մահմեդական | Միր-Խօդադակ | 315,015 | 350,000 | Գելատ |
| 8 | Բելգիա | Կաթոլիկ | Լեոպոլդ II. թագ. | 29,457 | 6,000,000 | Բրիւսէլ |
| 9 | Բուլգարիա | Օրթոդոքս | Ֆերդինանդ իշխ. | 99,873 | 5,000,090 | Սօֆիա |
| 10 | Բրազիլիա | Կաթոլիկ | Նախ. Ֆ. Պէյխո. | 8,337,213 | 15,000,000 | Րիօ-ժանէյրօ |
| 11 | Բուխարա | Մահմեդական | Սէիդ-Աբդուլ Էմ. | 239,000 | $2\frac{1}{2}$ միլ. | Բուխարա |
| 12 | Գերմանիա | Աւետարանա. | Վիլհելմ II. | 540,418 | 47 „ | Բերլին |
| 13 | Հաբեշստան | Հայադաւան | Մենելիք II. | 508,280 | 5 „ | Գոնդար |
| 14 | Հոլանդիա-գաղ. | Բողոքական | Վիլհելմ III. | 2,036,291 | $4\frac{1}{2}$ „ | Հագա |
| 15 | Յունաստան | Օրթոդոքս | Գէորգ I. | 68,688 | 2 „ | Աթենք |
| 16 | Դանիա | Լիւտերական | Քրիստիան. IX. | 232,302 | $2\frac{1}{2}$ „ | Կոպէնհագէն |
| 17 | Եգիպտոս | Մահմեդական | Աբբաս-փաշա | 994,600 | 7 „ | Գահիրէ |



| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 18 | Իսպանիա և գաղ. | Կաթոլիկ | Ալֆոնս III խնամ. | 1.633,817 | 27 միլ. | Մադրիտ |
| 19 | Իտալիա | Կաթոլիկ | Հումբերտ I. | 286,588 | $30\frac{1}{2}$ „ | Հռոմ |
| 20 | Չինաստան | Կռապաշտ | Կվանգ-սու | 11,574,356 | 403 „ | Պեկին |
| 21 | Կոլումբիա | Կաթոլիկ | Րաֆ-Նունէզ | 1,118,100 | 4 „ | Բոգոտա |
| 22 | Կոնգօ | » | Բէլգ. (թագ.) | 2,735,158 | 17 „ | Բոմա |
| 23 | Ռուսաստան | Օրթոդոքս | Նիկոլայ II. | 20,666,445 | 115 „ | Ս.Պետերբուրգ |
| 24 | Կորէյիա | Կաթոլիկ | Թունջի | 218,192 | $10\frac{1}{2}$ „ | Սէուլ-(Կեօնգ) |
| 25 | Մեքսիկա | Կաթոլիկ | Նախագ. Դիազ | 1,946,292 | 11 „ | Մեքսիկա |
| 26 | Մարոկօ | Մահմեդական | Մուլէյ-Հասան | 816,000 | 8 „ | Ֆէզ |
| 27 | Պարսկաստան | Մահմեդական | Նասրէդին-Շահ | 1,648,125 | 9 „ | Թեհրան |
| 28 | Պերու | Կաթոլիկ | Նախ. Բերմուդէս | 1,049,970 | 3 „ | Լիմա |
| 29 | Պորտուգալիա | Կաթոլիկ | Դոն-Կարլոս թագ | 89,143 | 5 „ | Լիսաբոն |
| 30 | Ռումինիա | Օրթոդոքս | Կարլօս | 129,947 | 6 „ | Բուքրէշ |
| 31 | Սերբիա | Օրթոդոքս | Աղէքսանդր I. | 48,586 | 2 „ | Բելգրադ |
| 32 | Սիամ | Բուդդայական | Ջուլալոնգկորն | 726,550 | 9 „ | Բանկօկ |
| 33 | Միացեալ-Նահ. | Քրիստոնեա. | Կլիվելենդ | 9,668,272 | 62 „ | Վաշինգտոն |
| 34 | Տաճկաստան | Մահմեդական | Աբդուլ-Համիդ II. | 2,061,224 | 21 „ | Կ. Պոլիս |
| 35 | Ֆրանսիա և գաղ. | Կաթոլիկ | Կազիմիր Պերիէ | 3,996,038 | 76 „ | Փարիզ |
| 36 | Ղարադաղ | Օրթոդոքս | Իշ. Նիկոլայ | 9030 | $\frac{1}{4}$ „ | Ցեթինէ |
| 37 | Չիլի | Կաթոլիկ | Նախ. Դոն-Մոնտ | 753,216 | 3 „ | Սան-Թագօ |
| 38 | Շվէյցարիա | Բողոքական | Նախ. Կարլ-Շենկ | 41,346 | 3 „ | Բերն |
| 39 | Շվէցիա-Նորվեգ. | Լիւտերական | Օսկար II. | 775,996 | 7 „ | Շտոգհոլմ |
| 40 | Էկվատոր | Կաթոլիկ | Նախ. Կորտէրօ. | 650,937 | $1\frac{1}{2}$ „ | Կվիտօ |
| 41 | Ճապոնիա | Սինդօյի օրէն | Մուտս-Խիտօ Կայ | 382,447 | 40 „ | Տօկիօ |



ՀԱՅԱՍԷՐ ԱՆԳՂԻԱՑԻ ՋԵՄՍ-ԲՐԱՅՍ

# XV. ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ամէն պատանի 16 տարին լրանալուց յետոյ և ոչ ուշ դեկտեմբերի 31-ին այն տարուայ, երբ նրա քսան տարին կը լրանայ, պարտաւոր է գրուել և ստանալ վկայական, որ նա գրուած է զինուորական ծառայութեան մէջ։ Զինուորական ծառայութեան գրուելու համար պէտք է յայտարարութիւն տալ այն զինուորական վարչութեան՝ որին պատկանում է ինքն իւր բնակութեան տեղի համաձայն ուր ինքն է ապրում, նորա հետ պէտք է ներկայացնէ 1) մետրիկական վկայական, 2) որտեղ է բնակվում նորա վկայականը, 3) ուսման վկայական և 4) իւր ընտանիքի դրութեան մասին ծանօթութիւն։

Ով որ զինուորական ծառայութեան գրուելու հասակից կ՚անցնի և երբ նորա հասակակիցների վիճակահանութիւնը կ՚սկսուի, չի տեղեկացնի զինուորական վարչութեան՝ նորան առանց վիճակահանութեան կ՚ենթարկեն զինուորական ծառայութեան։

Ով որ կամենում է, որ ժամանակ տան ուսումն աւարտելու, նա զինուորական վարչութեան պէտք ներկայացնէ յայտարարութիւն և ուսումնարանի վարչութիւնից էլ ուսումն շարունակելու վկայական։

Զինուորական ծառայութիւնից ազատւում են այն անձինք, որոնք մարմնի կազմուածքի պակասութիւն ունին կամ այնպիսի մի հիւանդութիւն, որ խանգարում է զինուորական ծառայութեան ենթարկուելու։ Զինուորական ծառայութեան մէջ վերջնական մարմնի չափը ընդունուած է 2 արշին և $2^1/_2$ վեր-

շոկ։ Որոնք բաւարար չեն աճել և ունին այնպիսի հիւանդութիւն, որ բոլորովին չի ազատի զինուորական ծառայութիւնից կամ դեռ ևս ունին մարմնի թուլութիւն—առողջանալու համար նոցա տրւում է մի տարի ժամանակ։ Եթէ մի տարուց յետոյ, նրանք դարձեալ թոյլ կը լինեն, նրանց կը նշանակեն ծառայութեան մէջ երկրորդ տարի, իսկ եթէ երկրորդ տարին ևս անպէտք կը ճանաչուին զինուորական ծառայութեան համար, այն ժամանակ նրանք ազատւում են ծառայութիւնից, որի համար և ստանում են վկայական։

Ընտանեկան դրութեան նկատմամբ սահմանուած է արտօնութիւններ երեք կարգի։

